Ոչ պաշտոնական թարգմանություն

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Մի կողմից՝ Եվրոպական Միությունը (այսուհետ «ԵՄ»), որին ներկայացնում է Եվրոպական Հանձնաժողովը (այսուհետ՝ «Հանձնաժողով») և մյուս կողմից՝ ՀՀ կառավարությունը (այսուհետ «Շահառու»)

ՀՈԴՎԱԾ 1. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ

1.1. ԵՄ-ն համաձայն է ֆինանսավորել, իսկ Շահառուն համաձայն է ընդունել հետևյալ ծրագրի ֆինանսավորումը
Ծրագիր A1.01/13. «Միջուկային ոլորտը կարգավորող հայաստանյան մարմնի և միջուկային ու ռադիոակտիվ անվտանգության կենտրոնի կարողությունների զարգացում՝ ռադիոակտիվ թափոնների կառավարման տեղակայանքների և միջոցների անվտանգության դիտարկման և գնահատման համար» (CRIS no: NSI/2013/024/792):

Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ բյուջեից՝ վերոնշյալ հիմնական փաստաթղթի ներքո. Միջուկային անվտանգության համագործակցության գործիք:

1.2. Ծրագրի ընդհանուր հաշվարկային արժեքը կազմելու է 1 000 000 եվրո և ԵՄ առավելագույն աջակցությունը այս ծրագրին սահմանված է 1 000 000 եվրո:

1.3 Ծրագիրը շահառուի կողմից չի համաֆինանսավորվի:

ՀՈԴՎԱԾ 2. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

2.1. Ինչպես սահմանված է ֆինանսավորման համաձայնագրի Հավելված II-ի (Ընդհանուր պայմաններ) 15-րդ հոդվածում, ֆինանսավորման համաձայնագրի կատարման ժամանակահատվածը մեկնարկում է ֆինանսավորման համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից և ավարտվում այդ օրվանից 108 ամիս անց:
2.2. Ծրագրի իրականացման ժամկետը կազմում է 84 ամիս:
2.3. Ծրագրի փակման ժամկետը սահմանված է 24 ամիս:

ՀՈԴՎԱԾ 3. ՀԱՍՑԵՆԵՐԸ

Ֆինանսավորման համաձայնագրի իրականացմանն առնչվող բոլոր հաղորդակցությունները պետք է լինեն գրավոր, հստակ հղում կատարեն ծրագրին ինչպես սահմանված է Հատուկ պայմանների Հոդված 1.1-ում և պետք է ուղարկվեն հետևյալ հասցեներով,

ա) Հանձնաժողովի համար՝
Պրն. Լուիս Ռիեռա Ֆիգուերաս
Տնօրեն
Մարդկային և հասարակության զարգացում
Զարգացման և համագործակցության գրասենյակ
Եվրոպական Հանձնաժողով
Ռուե Ժոզեֆ 2, 59
B-1000 Բրյուսել, Բելգիա
Էլ. հասցե՝ EUROPEAID-B@ec.europa.eu

բ) Շահառու՝
Պրն. Կարեն Ճշմարիտյան
Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար
Հայաստանի Հանրապետության կառավարություն
Միեր Մկրտչյան 5,
Երևան, 0010
Հայաստան

ՀՈԴՎԱԾ 4 - Կեղծարարության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի կոնտակտային անձ

Շահառուի կողմից կոնտակտային անձը, ով ունի համապատասխան իրավասություններ ուղղակիորեն համագործակցելու Կեղծարարության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի հետ, որպեսզի աջակցի այդ գրասենյակի կողմից իրականացվող գործունեությունը, հանդիսանում է

Պրն Էդվարդ Նալբանդյանը
Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար
Կառավարության տուն, 2
Հանրապետության հրապարակ
Երևան 0010
Հայաստանի Հանրապետություն

ՀՈԴՎԱԾ 5. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

5.1. Ֆինանսակվորման համաձայնագիրը բաղկացած է.

ա) Հատուկ պայմաններ
բ). Հավելված I. Տեխնիկական և վարչական դրույթներ, որոնք ներառում են ծրագրում նախատեսված միջոցառումների մանրամասն նկարագրերը
Գ) Հավելված II. Ընդհանուր պայմաններ

5.2. Ֆինանսավորման համաձայնագրի Հավելվածների և Հատուկ պայմանների դրույթների միջև հակասության դեպքում գերակայում են Հատուկ պայմանների դրույթները: Հավելված I-ի (Տեխնիկական և վարչական դրույթներ) և Հավելված II-ի (Ընդհանուր պայմաններ) դրույթների միջև հակասության դեպքում գերակայում են Հավելված I-ի դրույթները:

ՀՈԴՎԱԾ 6. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Ֆինանսավորման համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այն պահից, երբ Հանձնաժողովը Շահառուից ստանա ծանուցում համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար ներքին ընթացակարգերի ավարտի վերաբերյալ: Հանձնաժողովը պետք է տեղեկացնի շահառուին այս ծանուցման ստացման մասին: Սույն Ֆինանսավորման համաձայնագիրն ուժի մեջ չի մտնի, եթե Հանձնաժողովը նման ծանուցում չստանա մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը:

Ստորագրված է երկու բնօրինակից, օրինակներից մեկը տրամադրվել է Հանձնաժողովին, իսկ մյուսը՝ Շահառուին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՈՒՆԻՑ	ՇԱՀԱՌՈՒԻ ԱՆՈՒՆԻՑ
Լուիս Ռիեռա Տնօրեն, Մարդկային և հասարակության զարգացում Զարգացման և համագործակցության Գլխավոր Տնօրինություն Եվրոպական Հանձնաժողով	Պրն. Կարեն Ճշմարիտյան ՀՀ էկոնոմիկայի նախարար Հայաստանի Հանրապետություն
Ամսաթիվ՝	Ամսաթիվ՝

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ֆինանսակավորման Համաձայնագրի Հավելված N°NSI/2013/024-792

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՎԱՐՉԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գործընկեր պետություն/Շահառու	Հայաստանի կառավարություն		
Բյուջեի վերնագիր	BGUE-B2013-19060400-C1-DEVCO		
Վերնագիր	A3.01/13 «Միջուկային ոլորտը կարգավորող հայաստանյան մարմնի և միջուկային ու ռադիոակտիվ անվտանգության կենտրոնի կարողությունների զարգացում՝ ռադիոակտիվ թափոնների կառավարման տեղակայանքների և միջոցների անվտանգության դիտարկման և գնահատման համար»		
Ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը € 1.000.000 միլիոն ԵՄ աջակցության ընդհանուր թիվը € 1.000.000 միլիոն		
Օգնություն բնույթը/իրականացման մեթոդը	Նախագծային մոտեցում Ուղղակի կառավարում (իրականացվում է Հանձնաժողովի կողմից կապալառուի միջոցով)- ծառայությունների և մատակարարումների գնում		
DAC-կոդը	23064	Ոլորտ	Միջուկային անվտանգություն

1. Նկարագրությունը

Հայաստանի Հանրապետությունում ռադիոակտիվ թափոնները գեներացվում են Հայկական ԱԷԿ-ի շահագործման (Հայկական ԱԷԿ, երկու ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորներով) ընթացքում, արդյունաբերությունում, կրթության և բժշկության բանագավառներում՝ իոնացնող ճառագայթման աղբյուրների օգտագործման արդյունքում: Ռադիոակտիվ թափոնները գեներացվում են տարբեր ձևերով, սակայն դրանց մեծ մասը առաջանում է Հայկական ԱԷԿ-ում:

Հայկական ԱԷԿ-ի նախագծին համապատասխան կոնտեյներները հանդիսանում են հեղուկ ռադիոակտիվ թափոնների պահեստավորման վերջնական կետը՝ մինչև ԱԷԿ շահագործման նախագծային կյանքի ավարտը: Սակայն, ՀԱԷԿ-ի շահագործման ընթացքում պարզվեց, որ կոնտեյներների ծավալը բավարար չէ: Որպես

ստանդարտ լուծում Խորհրդային շրջանում նախագծված ԱԷԿ-ների համար, 1982թ. առաջարկվեց ՀԱԷԿ-ում կառուցել խտացման տեղակայանք DEF-200: DEF-200 տեղակայանքի միջոցով մշակվում են գոլորշու խտանյութերը, և արդյունքում առաջացած աղային հալվածքը հավաքվում է մետաղական կոնտեյներներում: Այդ կոնտեյներները այնուհետև տեղադրվում են միջին ակտիվության թափոնների պահեստարան, որը գտնվում է ՀԱԷԿ-ի հրապարակում: 2003 թվականին օժանդակ շինության տանիքին կառուցվել է նոր ժամանակավոր պահեստարան՝ 3000 աղային հալվածք պարունակող կոնտեյներների համար հաշվի առնելով, որ դրանք նախատեսված են ժամանակավոր պահեստավորման համար, չեն սերտիֆիկացված և չեն համապատասխանում պահեստավորման համար նախատեսված թափոնների ընդունելիության չափանիշներին:

Ժամանակավոր պահեստարանը այժմ ամբողջությամբ բեռնված է: Որոշ կոնտեյներներում հայտնաբերվել է արտահոսք, ինչը հանդիսանում է անվտանգության ապահովման տեսակետից լրացուցիչ խնդիր:

Հայկական ԱԷԿ-ը մշակել և Միջուկային ոլորտը կարգավորող հայաստանյան մարմին է ներկայացրել ՀԱԷԿ-ում ռադիոակտիվ թափոնների կառավարման ծրագիրը: Ծրագրում ներկայացված է Հայկական ԱԷԿ-ի ցածր ակտիվության թափոնների պահեստարանում ցածր և միջին ակտիվության թափոնների վերամշակման և կոնդիցիայի բերման տարբերակը, ինչպես նաև՝ ցածր և միջին ակտիվության թափոնների երկարաժամկետ պահեստավորման տարբերակը: Ծրագրում ներկայացված է նաև աղային հալվածքներ պարունակող փաթեթների վերամշակման և կոնդիցիայի բերման տարբերակը՝ հիմք ընդունելով տեխնիկատնտեսական հետազոտությունը, որն անցկացվել է ԱԷՄԳ-ի ARM/4/003 ծրագրի «Հայկական ԱԷԿ-ում ռադիոակտիվ թափոնների կառավարման ուժեղացումը» շրջանակներում, որն ավարտվել է 2003 թվականին:

Այս միջուկային անվտանգության բնագավառում համագործակցության ծրագրի նպատակն է աջակցել Միջուկային ոլորտը կարգավորող հայաստանյան մարմնին և Միջուկային ու ռադիոակտիվ անվտանգության կենտրոնին Հայկական ԱԷԿ-ում կուտակված ցածր և միջին ակտիվության թափոնների պահեստավորման հետ կապված ռիսկի գնահատման հարցում և Հայկական ԱԷԿ-ի ցածր ու միջին ակտիվության թափոնների վերամշակման ու կոնդիցիայի բերման և հետագա թաղման նկատմամբ պահանջների մշակման հարցում:

1.1. Նպատակները

Այս ծրագրի նպատակները հետևյալն են ՝

(Ա) Ուժեղացնել Միջուկային ոլորտը կարգավորող հայաստանյան մարմնի և Միջուկային ու ռադիոակտիվ անվտանգության կենտրոնի կարողությունները

կապված ԱԷԿ-ի շահագործման ընթացքում առաջացած պինդ ռադիոակտիվ թափոնների կառավարման ու եկրարաժամկետ կառավարման անվտանգության դիտարկման, գնահատման և որոշումների ընդունման հետ,

(Բ) Ուժեղացնել ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգությունը Հայաստանի Հանրապետությունում և նպաստել ռադիոակտիվ թափոնների կառավարման ազգային ենթակառուցվածքի ամրապնդմանը:

(Գ) Ուժեղացնել ռադիոակտիվ թափոնների կառավարման հետ կապված կարգավորման դաշտը:

1.2. Ակնկալվող արդյունքները և հիմնական միջոցառումները

Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա Միջուկային ոլորտը կարգավորող հայաստանյան մարմնին և Միջուկային ու ռադիոակտիվ անվտանգության կենտրոնին կատարել Հայկական ԱԷԿ-ում կուտակված ցածր և միջին ակտիվության թափոնների վերամշակման ու կոնդիցիայի բերման և հետագա թաղման հետ կապված ռիսկի գնահատում:

Ակնկալվում է, որ Միջուկային ոլորտը կարգավորող հայաստանյան մարմնի և Միջուկային ու ռադիոակտիվն անվտանգության կենտրոնի կարողությունները կուժեղացվեն անվտանգության գնահատման կարգավորող որոշումների կայացման համար անվտանգության վերլուծության և լիցենզավորման ժամանակ, կանցնեն համապատասխան վերապատրաստում և ձեռք կբերեն անհրաժեշտ գնահատման միջոցներ՝ հետագայում անկախ գնահատման և ստուգում կատարելու համար:

Վերը նշված նպատակներն իրագործելու համար այս ծրագրում նախատեսված են հետևյալ հիմնական խնդիրները.

Խնդիր 1- Հայկական ԱԷԿ-ում կուտակված ցածր և միջին ակտիվության թափոնների համար առաջարկվող վերամշակման և պահեստավորման հետ կապված անվտանգության փաստաթղթերի դիտարկումը.

- Հայկական ԱԷԿ-ի կողմից առաջարկված աղային հալվածքների և պինդ ցածր ու միջին ակտիվության թափոնների վերամշակման, կոնդիցիայի բերման, և պահեստավորման տարբերակների դիտարկումը և գնահատումը,
- ՋՋԷՌ-440/230 տիկի ռեակտորների ցածր ու միջին ակտիվության թափոնների վերամշակման տեխնոլոգիական տարբերակների համեմատական վերլուծությունները և Հայկական ԱԷԿ-ի համար օպտիմալ տարբերակի վերաբերյալ առաջարկությունների մշակումը, որոնց հիման վրա կարող են մշակել կարգավորող պահանջները/պայմանները;
- ԱԷԿ անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի անկախ վերլուծությունը և վերիֆիկացիան:

Խնդրիր 2. ՀՀ Միջուկային ոլորտը կարգավորող հայաստանյան մարմնի և Միջուկային ու ռադիոակտիվ անվտանգության կենտրոնի կարողությունների զարգացումը

Միջուկային ոլորտը կարգավորող հայաստանյան մարմնի և Միջուկային ու ռադիոակտիվ անվտանգության կենտրոնի գիտելիքների և կարգավորման ունակությունների զարգացման համար, կուսումնասիվի ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորներ շահագործող պետությունների փորձը: Այս խնդրում նախատեսված են հետևյալ հիմնական միջոցառումները.

- ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորներ շահագործող պետություններում հեղուկ ռադիոակտիվ թափոնների կառավարման փորձի դիտարկումը և փոխանակումը,
- Ռադիոակտիվ թափոնների նախնական թաղման անվտանգության գնահատման վերաբերյալ հատուկ դասընթացի անցկացումը՝ շեշտը դնելով ԱԷԿ-ի շահագործման արդյունքում առաջացած թափոնների վերամշակման և պահեստավորման վրա (կներառվի նաև անվտանգության գնահատման ծրագրային միջոցների տրամադրումը):

Խնդիր 3. ԱԷԿ-ի ցածր ակտիվության թափոնների պահեստարանի հնարավոր օգտագործման անվտանգության գնահատումը

Այս խնդրի շրջանակներում նախատեսված են հետևյալ հիմնական միջոցառումները.

- Տեխնիկատնտեսական ուսումնասիրության դիտարկումը և գնահատումը՝ վերակառուցելու ԱԷԿ-ի պինդ ցածր ակտիվության թափոնների պահեստարանը՝ կոնդիցիայի բերված ցածր և միջին ակտիվության թափոնների պահեստարան:
- Անհրաժեշտ կարգավորող պահանջները/պայմանները մշակումը:

Այս խնդիրը կապված է INSC AR/ TS/09 «Հայաստանի միջուկային անվտանգության կարգավորող մարմի անվտանգության գնահատման կարողությունների զարգացումը Մեծամոր ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության բարձարցման և շահագործումից հանման միջոցառումների լիցենզավորման համար» ծրագիր շրջանակներում գործող, Խնդիր 4-ին:

Խնդիր 4. Թափոնների թաղման անվտանգության ապահովման պահանջները

Այս խնդրի շրջանակներում նախատեսվում են միջոցառումներ կապված կոնկրետ կարգավորող պահանջների մշակման հետ (Օրինակ՝ կարգավորման փաստաթղթերը)՝ թափոնների գերեզմանոցի շահագործման ընթացքում ու փակումից հետո ռադիոակտիվ թափոնների անվտանգ թաղման վերաբերյալ:

Այս խնդրում կներառվեն նաև անվտանգության ընդհանուր պահանջները բոլոր տեսակի թափոնների պահեստարանների համար հրապարակի ընտրության, նախագծման, կառուցման և շահագործման վերաբերյալ, հաշվի առնելով ազգային իրավական հիմքը և համապատասխան միջազգային չափանիշները (օրինակ ԱԷՄԳ):

2. Ծրագրի իրականացումը

2.1. Ծրագրի իրականացման ժամկետը

Այս ծրագրի իրականացման ժամկետը նշված է հատուկ պայմանների հոդված 2-ում:

2.2 Վայրը

Ծրագրում նախատեսված միջոցառումները կիրականացվեն Երևանում, Հայաստան:

2.3 Ծրագրի իրականացման տարրերը և մոդուլները

2.3.3 Գնումներ (ուղակի կառավարում Հանձնաժողովի կողմից, որպես պայմանագիր կնքող կողմ)

Առարկան, ընդհանուր բառերով, եթե հնարավոր է	Տեսակը (աշխատանքների, ծառայություններ)	Պայմանագրերի քանակը	Ընթացակարգի մեկնարկի եռամսյակը
Աջակցություն Կարգավորող մարմնին	Ծառայություններ	1	2/2015

2.4 Գնումների և դրամաշնորհների աշխարհագրական շրջանակը

Աշխարհագրական շրջանակը տեղի առումով գնումներին և դրամաշնորհային ընթացակարգերում մասնակցելու համար և մատակարարման ժամկետների հետ կապված սահմանվում է գործող օրենսդրության համապատասխան:

2.5 Բյուջե

Մոդուլ	Գինը Եվրոյով	Երրորդ կողմի ներդրումը (եթե հայտնի է)
2.3.3. Գնում (ուղակի	900	Չկա

կառավարում հանձնաժողովի կողմից որպես պայմանագիր կնքող կողմ)		
2.8. Կապը և տեսանելիությունը	30	Չկա
3.2, 3.3 Գնահատում և աուդիտ	70	Չկա
Ընդամենը	1000	0

2.6 Ծրագրի մոնիթորինգը

Եվրոպական Հանձնաժողովը կիրականցնի արդյունքների վրա հիմնված մոնիթորինգ անկախ խորհրդատուների օգնությամբ՝ ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացման 6-րդ ամիսց սկսած, որը կավարտվի ծրագրի ավարտից առնվազն 6 ամիս առաջ:

Ի լրումն արդյունքների վրա հիմնված մոնիթորինգի, ծրագրի իրականացման ընթացքը կվերահսկվի սահմանված արդյունավետության ցուցանիշների օգնությամբ, ինչպիսիք են.

- հիմնական փուլերի իրագործումը
- ընթացիկ և տեխնիկական հաշվետվությունները
- միջոցների կիրառումը:

Երկարաժամկետ տեսակետները հիմնված կլինեն արդյունավետության ցուցանիշների վրա, որոնք կսահմանվեն տեխնիկական առաջադրանքում: Դրանք կսահմանվեն այնպես, որպեսզի հաշվարկվի ծրագրի միջնաժամկետ ազդեցությունը: Կարևոր է շահառուի մասնակցությունը այս գնահատման գործընթացում՝ միջոցառումների ու ծրագրի արդյունքների կայունությունն ապահովելու համար:

2.7 Համակարգումը դոնորների հետ

Այս գործողությունը անկախ է և կապ չունի այլ դոնորների կամ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության գործողությունների հետ: Այս ծրագրով չի նախատեսվում այլ միջազգային դոնորների մասնակցություն և չի համընկնի այլ երկկողմանի կամ բազմակողմանի դոնորային կազմակերպությունների միջոցառումների հետ: Այս ծրագրով Հայաստանի կարգավորող մարմնի հետ

կապված միջոցառումները չեն առաջացնի կրկնօրինակում: Ամեն դեպքում ԵՀ կշարունակի համակարգել իր գործողությունները ԱԷՄԳ-ի հետ ապահովելու միջուկային անվտանգության չափանիշների պահպանումը:

2.8. Հաղորդակցման ուղիները և տեսանելիությունը

ԵՀ հաղորդակցման ուղիները և տեսանելիությունը հանդիսանում է ԵՀ կողմից ֆինանսավորվող ծրագրեի իրավական պարտավորություն:

Հաղորդակցման ուղիները և տեսանելիությունը կապահովվեն ԵՀ արտաքին գործողությունների համար սահմանված Ուղիների և տեսանելիության ձեռնարկում ներառված չափանիշներին ու կանոններին համապատասխան: Այս ձեռնարկը ներառում է գործընկերների հետ պայմանագրային պարտավորությունների հիմնարար սկզբունքները, որոնք պետք է իրականացնել այնպես, ինչպես ցանկացած այլ պայմանագրային պարտավորությունները:

Կանոնավոր կերպով, կապալառուն Եվրոպական Հանձնաժողովին կներկայացնի ծրագրի առաջընթացի վերաբերյալ հաշվետվություններ, պատճենները՝ Շահառուին, ԵՄ պատվիրակությանը, ԵՄ համատեղ հետազոտական կենտրոնին և ԵՄ մոնիտորինգի թիմին: Խորհրդատուն պետք է հատուկ ուշադրություն դարձնի տվյալների գաղտնիությանը:

Տեսանելիության հետ կապված փաստաթղթերից են.

- Ծրագրի մեկնարկից հետո մեկնարկային մամլո հաղորդագրությունը,
- Ամփոփ մամլո հաղորդագրությունը, որը կներկայացվի ծրագրի եզրափակիչ հաշվետվության հետ միասին,
- Կապալառուի կողմից կազմակերպված եզրափակիչ հանդիպումը՝ ծրագրի արդյունքները ներկայացնելու համար

Արդյունքների ներկայացման հետ կապված այլ գործողությունները կամ ԵՄ ծրագրի իրականացման տեսանելիության լավացման հետ կապված միջոցառումները կարող են իրականացվել այս ծրագրին զուգահեռ:

2.9 Կազմակերպական միջոցառումները և պատասխանատվությունները

Այս ծրագիրը կիրականցվի Եվրոպական Հանձնաժողովի կողմից, Զարգացման և համագործակցության գրասենյակ, «Բ5» բաժին, Կայունությանն ու խաղաղությանն աջակցող գործիք, Միջուկային անվտանգություն:

Բոլոր պայմանագրերը և վճարումները կկատարվեն ԵՀ կողմից, Շահառուի անունից:

3. Մոնիտորինգ, գնահատում և աուդիտ

3.1 Մոնիթորինգ և գնահատում

Ծրագրի վերահսկողությունը կիրականացվի ստանդարտ ընթացակարգերին համապատասխան: Մոնիտորինգը և գնահատումը պետք է հիմնված լինեն ծրագրի առաջընթացի գնահատման, ծրագրի արդյունքների և նպատակների իրագործման վրա: Ի լրումն տեղում իրականացվող վերահսկողությանը, կիրականացվի ծրագրերի վերահսկողություն ԵՀ կողմից, ըստ անհրաժեշտության Կեղծիքի Դեմ Պայքարի Եվրոպական Գրասենյակի և Եվրոպական Վերահսկիչ Պալատի կողմից; համապատասխան որակավորում ունեցող անձիք պարբերաբար կիրականացնեն ծրագրի մոնիթորինգ: Պարբերաբար կանցկացվեն գնահատումներ՝ ստուգելու ծրագրի ազդեցության համապատասխանությունը, արդյունավետությունը և էֆֆեկտիվությունը:

3.2 Աուդիտ

ԵՀ կանոններին համապատասպան կնշանակվի միջազգային ճանաչում ունեցող արտաքին աուդիտոր:

Հավելվածներ

Հավելված 1 – Ծրագրի տրամաբանական շրջանակը:

	Միջամտության տրամաբանություն	**օբյեկտիվորեն ստուգվող ձեռքբերումների ցուցանիշները**	**Ստուգման աղբյուրը և միջոցները**	**Ենթադրությունները**
Ընդհանուր նպատակները	Հայաստանում ռադիոակտիվ փաթոնների կառավարման բարելավումը՝ ուժեղացնելով կարգավորող մարմնի և դրա տեխնիկական աջակցության կազմակերպության կարողությունները և զարգացնելով ռադիոակտիվ թափոնների կարգավորման ենթակառուցվածքը	Միջազգային լավագույն փորձի, մեթոդների, ընթացակարգերի, մոտեցումների և այլն փոխանցումը՝ միջուկային թափոնների անվտանգ կառավարման կարգավորման համար	Ծրագրի շրջանակներում մշակված փաստաթղթերը և մեթոդների, ընթացակարգերի, մոտեցումների և ընդունումը կամ դրանցը ընդունելու պարտավորությունը, Կոմիտեի կողմից	Փաստաթղթերի մատչելիությունը և բավարար քանակությամբ մարդկային միջոցները և յուրացման հնարավորությունը կոմիտեում
Հատուկ նպատակները	Հայկական ԱԷԿ-ում աղային հալվածքների և ցածր ու միջին ակտիվության թափոնների վերամշակման և պահեստավորման համար ներկայացված անվտանգության փաստաթղթերի դիտարկումը	ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորների ցածր ու միջին ակտիվության թափոնների համեմատությունը ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորներ շահագործող պետությունների փորձի հետ	ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորների ցածր ու միջին ակտիվության թափոնների կառավարման վերաբերյալ կարգավորող փաստաթղթեր և ուղղեցույցներ	Կոնկրետ փաստաթղթերի առկայությունը ՀԱԷԿ-ի հրապարակում ցածր ու միջին ակտիվության թափոնների վերամշակման և պահեստավորման վերաբերյալ
	Միջուկային ոլորտը կարգավորող հայաստանյան մարմնի և	Աշխատանքային հանդիպումներ,	Որակի կառավարման համակարգը:	ՋՋԷՌ ռեակտորների հրապարակներում

	Միջամտության տրամաբանություն	**օբյեկտիվորեն ստուգվող ձեռքբերումների ցուցանիշները**	**Ստուգման աղբյուրը և միջոցները**	**Ենթադրությունները**
	Միջուկային ու ռադիոակտիվ անվտանգության կենտրոնի գիտելիքների և կարգավորման կարողությունների զարգացումը	վերապատրաստման դասընթացներ, վերապատրաստում աշխատատեղում: Անձնակազմի քանակը կապված թափոնների կառավարման համակարգի որակի հետ և ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորներ շահագործող պետություններում կիրառվող ընթացակարգերը	Կարգավորող փաստաթղթերը և ուղղեցույցները: Ծրագրի իրականացման ընթացքում մշակված փաստաթղթերը:	ցածր ու միջին ակտիվության թափոնների վերամշակման և պահեստավորման վերաբերյալ կոնկրետ փաստաթղթերի առկայությունը: Կոմիտեում համապատասխան մարդկային միջոցների առկայությունը:
	Գնահատել ՀԱԷԿ-ի պահեստարանի հնարավոր օգտագործումը՝ ցածր ակտիվության թափոնների թափոնների պահեստավորման համար	Թափոնների պահեստարանի գնահատումը միջազգային չափանիշների հիման վրա	ՋՋԷՌ տիպի ռեակտորներ շահագործող ԱԷԿ-ներում թափոնների պահեստավորման վերաբերյալ փաստաթղթերը և ԱԷՄԳ-ի չափանիշները	Ցածր ու միջին ակտիվության թափոնների պահեստարանների անվտանգության և կարգավորման հետ կապված առկա փորձը
Հատուկ նպատակները	Թափոնների թաղման նկատմամբ անվտանգության ապահովման պահանջների	Ռադիոակտիվ թափոնների կարգավորման	Ռադիոակտիվ թափոնների կառավարումը ՋՋԷՌ	Ռադիոակտիվ թափոնների կառավարման հետ

	Միջամտության տրամաբանություն	**օբյեկտիվորեն ստուգվող ձեռքբերումների ցուցանիշները**	**Ստուգման աղբյուրը և միջոցները**	**Ենթադրությունները**
	մշակումը, ներառյալ բոլոր տեսակի թափոնների գերեզմանոցների համար հրապարակի ընտրությունը, նախագծումը, կառուցումը և շահագործման հանձնումը հաշվի առնելով ազգային օրենսդրությունը ու համապատասխան միջազգային պահանջները	վերաբերյալ միջազգային լավագույն փորձի, մեթոդների, ընթացակարգերի փոխանցումը	տիպի ռեակտորների հրապարակում: Միջուկային թափոնների համար հրապարակի ընտրության, նախագծման, կառուցման և շահագործման հանձնման վերաբերյալ միջազգային փաստաթղթերը	կապված կարգավորման ազգային և միջազգային փաստաթղթերի առկայությունը
Ակնկալվող արդյունքները	Հայկական ԱԷԿ-ի աղային հալվածքների և պինդ ցածր ու միջին ակտիվության թափոնների վերամշակման, կոնդիցիայի բերման և պահեստավորման համար առաջարկվող տարբերակների գնահատումը համեմատելով այլ ՋՋԷՌ տիպի ռեակտորների տարբերակների հետ: Հայկական ԱԷԿ-ի անվտանգության գնահատումը:	Հայկական ԱԷԿ-ի պինդ ցածր ու միջին ակտիվության թափոնների կառավարման հետ կապված կարգավորող փաստաթղթերը	ՋՋԷՌ տիպի ռեակտորների պինդ ցածր ու միջին ակտիվության թափոնների կառավարման հետ կապված կարգավորող փաստաթղթերը: ԱԷՄԳ-ի կարգավորող փաստաթղթերը թափոնների կառավարման վերաբերյալ	ՋՋԷՌ տիպի ռեակտորների թափոնների կառավարման հետ կապված ազգային և միջազգային կարգավորող փաստաթղթերի առկայությունը

	Միջամտության տրամաբանություն	**օբյեկտիվորեն ստուգվող ձեռքբերումների ցուցանիշները**	**Ստուգման աղբյուրը և միջոցները**	**Ենթադրությունները**
	ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորներ շահագործող պետություններում հեղուկ ցածր ակտիվության թափոնների կառավարման փորձի ձեռքբերումը Ռադիոակտիվ թափոնների նախնական թաղման համար անվտանգության գնահատման միջոցները, շեշտը դնելով պահեստավորման և վերամշակման վրա:	Հայկական ԱԷԿ-ի ցածր ու միջին ակտիվության թափոնների կառավարման ընթացակարգերը և ուղեցույցերը: Աշխատանքային հանդիպումներ, վերապատրաստման դասընթացնե և աշխատատեղում անցկացվող վերապատրաստում: Վերապատրաստման ծրագիր:	Շահագործման որակի կառավարման համակարգը: Կարգավորող ուղեցույցները և ընթացակարգերը: Ծրագրի իրականացման արդյունքում մշակված փաստաթղթերը: վերապատրաստման դասընթացները:	ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորներ շահագործող պետություններում կարգավորման և անվտանգության վերաբերյալ փաստաթղթերի առկայությունը: Մարդկային միջոցների առկայությունը:
Ակնկալվող արդյունքները	ՀԱԷԿ-ի պինդ ցածր ակտիվության պահեստարանի ռադիոակտիվ թափոնների պահեստարանի կոնդիցիայի բերված միջին և ցածր ակտիվության թափոնների պահեստարանի վերակառուցման վերաբերյալ տեխնիկանտնտեսական	Գործող թափոնների պահեստարանի հնարավոր վերակառուցման վերաբերյալ հաշվետվություն, որը ներառում է ընթացակարգերի գնահատումը:	ցածր ու միջին ակտիվության թափոնների ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորներ շահագործող ԱԷԿ-ների և կոնդիցիայի բերված պինդ թափոնների լավագույն միջազգային	Փաստաթղթերի առկայությունը և համապատասխան մարդկային միջոցների առկայությունը:

	Միջամտության տրամաբանություն	**օբյեկտիվորեն ստուգվող ձեռքբերումների ցուցանիշները**	**Ստուգման աղբյուրը և միջոցները**	**Ենթադրությունները**
	փաստաթղթերի ուսումնասիրություն: Համապատասխան կարգավորող պահանջների մշակումը	Կարգավորող մարմնի կողմից նոր տեղակայանգի շահագործման հանձնման և Շահագործման գնահատումը:	կարգավորող պահանջների վերաբերյալ փաստաթղթերը	
Ակնկալվող արդյունքները	Միջուկային ոլորտը կարգավորող հայաստանյան մարմինը և Միջուկային ու ռադիոակտիվ անվտանգության կենտրոնը կարող են կատարել անվտանգության գնահատում կարգավորման հետ կապված որոշում ընդունելու համար ռադիոակտիվ թափոնների անվտանգության դիտարկման և լիցենզավրման ժամանակ: Անկախ գնահատման և վերիֆիկացիայի համար միջոցները:	ՀԱԷԿ-ի հրապարակում թափոնների կառավարման հետ կապված անվտանգության պահանջները (լիցենզավորում և շահագործում): Վերապատրաստման ծրագիրը:	Լավագույն միջազգային պահանջները ռադիոակտիվ թափոնների կառավարման վերաբերյալ: ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորների հրապարակի վերաբերյալ հատուկ պահանջները:	Փաստաթղթերի առկայությունը և համապատասխան մարդկային միջոցների առկայությունը: Զարգացման ծրագիրը և վերապատրաստմաան ծրագիրը:

	Միջամտության տրամաբանությունը	**Օբյեկտիվորեն ստուգվող ձեռքբերումների ցուցանիշները**	**Ստուգումները աղբյուրը ու միջոցները**	**Ենթադրությունները**
Միջոցառումները	Հայկական ԱԷԿ-ում գեներացված աղային հալվածքների և պինդ ցածր ու միջին ակտիվության թափոնների վերամշակման, կոնդիցիայի բերման, և պահեստավորման համար առաջարկվող տարբերակների դիտարկումը և գնահատումը ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորների պինդ ու հեղուկ ցածր ու միջին ակտիվության թափոնների վերամշակման տեխնոլոգիական տարբերակների համեմատությունը	Ծրագրի շրջանակներում կարգավորող փաստաթղթերի և ուղղեցույցների մշակումը և/կամ ֆինալազեդ ԱԷԿ-ի կողմից ներկայացված որոշ անվտանգության ապահովման փաստաթղթերի անկախ վերլուծությունը և վերիֆիկացիան	կարգավորող փաստաթղթերի և ուղղեցույցների հետ կապված վերապատրաստման դասընթացները: ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորների հրապարակում թափոնների կառավարման վերաբերյալ փաստաթղթերը – անվտանգության և կարգավորման ասպեկտները	Միջուկային թափոնների կառավարման տեխնոլոգիական տարբերակների վերաբերյալ փաստաթղթերի առկայությունը: Անձնակազմի վերապատրաստումը պինդ ցածր ու միջին ակտիվության թափոնների վերամշակման, կոնդիցիայի բերման, և պահեստավորման կարգավորման բնագավառում: Միջուկային ոլորտը կարգավորող հայաստանյան մարմնում համապատասխան անձնակազմի

	Միջամտության տրամաբանությունը	**Օբյեկտիվորեն ստուգվող ձեռքբերումների ցուցանիշները**	**Ստուգումները աղբյուրը ու միջոցները**	**Ենթադրությունները**
	ՀԱԷԿ-ին առաջարկություններ տրամադրումը և կարգավորող պահանջների մշակումը			առկայությունը և գիտելիքների յուրացումը:
	ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորներ շահագործող պետություններում հեղուկ ցածր ակտիվության թափոնների կառավարման փորձի դիտարկումը և փոխանակումը Ռադիոակտիվ թափոնների նախնական թաղման անվտանգության գնահատման վերաբերյալ հատուկ դասընթացի անցկացումը շեշտը դնելով ԱԷԿ-ի շահագործման	Վերապատրաստված մասնագետների քանակը ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորների հրապարակում թափոնների կառավարման նկատմամբ սահմանված անվտանգության ապահովման պահանջները և կարգավորող փասթաթղթերը	ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորներ շահագործող պետությունների որակի կառավարման համակարգը: Կարգավորող ուղեցույցները և ընթացակարգերը: Ծրագրի իրականացման արդյունքում մշակված փաստաթղթերը:	ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորներ շահագործող պետությունների հետ համագործակցության հաստատումը:

	Միջամտության տրամաբանությունը	**Օբյեկտիվորեն ստուգվող ձեռքբերումների ցուցանիշները**	**Ստուգումները աղբյուրը ու միջոցները**	**Ենթադրությունները**
	ընթացքում առաջացած թափոնների վերամշակման և պահեստավորման վրա (կներառվի նաև անվտանգության գնահատման ծրագրային միջոցների տրամադրումը):			
	ՀԱԷԿ-ի պինդ ցածր ակտիվության պահեստարանի ռադիոակտիվ թափոնների պահեստարանի կոնդիցիայի բերված միջին և ցածր ակտիվության թափոնների պահեստարանի վերակառուցման վերաբերյալ տեխնիկանտնտեսական փաստաթղթերի դիտարկումը և	Կարգավորող փաստաթուղթ ցածր ու միջին ակտիվության թափոնների անվտանգության վերաբերյալ, ներառյալ գործող պահեստարանի վերակառուցման համար անհրաժեշտ ընթացակարգերը և մոդիֆիկացիաները	Միջազգային պահանջները և ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորների հրապարակում թափոնների պահեստավորման վերաբերյալ հատուկ փաստաթղթերը	Թափոնների պահեստարանների կառուցման և շահագործման վերաբերյալ անվտանգության և կարգավորման փաստաթղթերի առկայությունը: Հմուտ անձնակազմի առկայությունը

	Միջամտության տրամաբանությունը	**Օբյեկտիվորեն ստուգվող ձեռքբերումների ցուցանիշները**	**Ստուգումները աղբյուրը ու միջոցները**	**Ենթադրությունները**
	գնահատումը Համապատասխան կարգավորող պահանջների մշակումը			
	Մշակել հատուկ կարգավորող պահանջներ բոլոր տեսակի թափոնների թաղման վերաբերյալ , ներառյալ գերեզմանոցների հրապարակի ընտրության, նախագծման, կառուցման և շահագործման	Ռադիոակտիվ թափոնների վերաբերյալ կարգավորող պահանջների գնահատումը համեմատելով լավագուն միջազգային փորձի հետ	ԱԷՄԳ-ի, ԵՀ և ՋՋԷՌ-440/230 տիպի ռեակտորներ շահագործող պետությունների կարգավորող փաստաթղթերը ռադիոակտիվ թափոնների թաղման վերաբերյալ	Թափոնների թաղման վերաբերյալ կարգավորող փաստաթղթերի առկայությունը

ՀԱՎԵԼՎԱԾ II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՄԱՍ 1 ԴՐՈՒՅԹՆԵՐ ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ԱՅՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՏԵՂ ՇԱՀԱՌՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔՈՂ ԿՈՂՄ

Հոդված 1. Ընդհանուր Սկզբունքները

1.1 Մաս 1-ի նպատակն է սահմանել Շահառուի խնդիրները բյուջեի կատարման հետ կապված, ինչպես ներկայացված է Հավելված 1-ում (Տեխնիկական և ադմինիստրատիվ դրույթները) և սահմանել այդ խնդիրների իրականացման հետ կապված Շահառուի և հանձնաժողովի իրավունքներն ու պարտականությունները:

Այդ խնդիրները ներառում են Շահառուի կողմից, որպես պայմանագիր կնքող մարմնի, գնումների և դրամաշնորհային ընթացակարգերի իրականացում և դրա արդյունքում գնումների և դրամաշնորհային պայմանագրեր կնքում, ստորագրում և կիրարկում:

Որպես կանոն, հանձնաժողովը կկատարի համապատասխան վճարումներ կապալառուներին և դրամաշնորհային շահառուներին: Սակայն Շահառուն պարտավոր է իրականացնել որոշակի վճարումներ, այդ թվում իր աշխատակազմին, ծրագրի նախահաշվի հիման վրա, ինչպես սահմանված է Ընդհանուր պայմանների հոդված 5-ում:

Եթե Շահառուն Աֆրիկյան, Կարիբյան և Խաղաղօվկիանոսյան (ԱԿԽ) երկրների պետություն է ու ֆինանսավորվում է ԵԶՀ ծրագրի շրջանակներում Հատուկ պայմանների հոդված 1-ին համաձայն, պետք է իրականացվեն Հոդված 35 (1) վեցերորդ պարբերության «գ»-«ի» կետերում և ԱԿԽ-ԵՄ համագործակցության համաձայնագրի Հոդված 35 (2)-ում նշված միջոցառումները:

Եթե Շահառուն ԱԵՊ պետություն է ու ֆինանսավորվում է ԵԶՀ ծրագրի շրջանակներում Հատուկ պայմանների հոդված 1.1-ին համաձայն, պետք է իրականացվեն 2002թ. դեկտեմբերի 20-ի ԵՄ № 2304/2002 կանոնակարգի Հոդված 14 (1) և Հոդված 14(2) վեցերորդ պարբերությունում ներառված միջոցառումները, որը կատարում է ԵԽ 2001/822/ԵՀ որոշումը՝ արտասահմանյան երկրները և տարածքները Եվրոպական Համայնքային միացնելու մասին:

1.2 Շահառուն պատասխանատու է ֆինանսավորման համաձայնագրում նախատեսված պարտավորությունների կատարման համար, նույնիսկ եթե համաձայնագրում սահմանվում են հավելված 1-ում նշված կազմակերպություններից

տարբեր կազմակերպություններ, որոնք կիրականացնեն միջոցառումներ ծրագրի նախահաշվի համատեքստում, ինչպես նշված է Ընդհանուր պայմանների հոդված 5-ում: Հանձնաժողովը, մասնավորապես, իրեն իրավունք է վերապահում կասեցնել վճարումները և կասեցնել և/կամ դադարեցնել այս ֆինանսավորման համաձայնագիրը՝ գործողությունների, բացթողումների և/կամ այլ իրավիճակների հիման վրա:

1.3 Շահառուն իրականացնում է Ընդհանուր պայմանների հոդված 1.1-ում նշված խմդիրները Հանձնաժողովի կողմից սահմանված և հրապարակված գնումների և դրամաշնորհային պայմանագրերի կնքնման ընդացակարգերին ու տիպային փաստաթղթերին համապատասխան, որոնք գործում են նշված ընթացակարգի մեկնարկի պահին:

1.4 Շահառուն պետք է սահմանի և կիրառի էֆեկտիվ և արդյունավետ ներքին հսկողության համակարգ: Շահառուն պետք է հարգի պատշաճ ֆինանսական կառավարման, թափանցիկության և խտրականության բացառման սկզբունքները և խուսափի շահերի բախման հետ կապված իրավիճակներից:

Շահերի բախումը առկա է այնտեղ, որտեղ ցանկացած պատասխանատուի կողմից անկողմնակալ և օբյեկտիվ գործառույթների իրականացումը վտանվում է ընտանիքի, հուզական կյանքի, քաղաքական և ազգային մերձավորություն, տնտեսական շահի կամ որևէ այլ հետաքրքրության պատճառով՝ կապված մրցույթի կամ հայտատուի կամ կապալառուի կամ դրամաշնորհի շահառուի հետ:

Ներքին հսկողության համակարգը մի գործընթաց է, որի նպատակն է ապահովել գործողությունների էֆեկտիվ, արդյունավետ և տնտեսողական իրականացումը, ինչպես նաև ներկայացված հաշվետվությունների հուսալությունը, ակտիվների և տեղեկատվության պաշտպանությունը, խարդախության և խախտումների կանխումը, հայտնաբերումը և շտկումը, և ֆինանսական գործունեության հետ կապված իրավական և կարգավորման դաշտի պատշաճ կերպով կառավարվումը, հաշվի առնելով գործունեության բազմամյա բնույթը, ինչպես նաև վճարումների բնույթը:

Մասնավորապես, եթե Շահառուն իրականացնում է վճարումներ ծրագրի նախահաշիվին համաձայն թույլտվության և հաշվապահական հաշվառման աշխատակիցների գործառույթները պետք է առանձնացվեն է և լինեն փոխադարձաբար անհամատեղելի: Շահառուն պետք է սահմանի հաշվապահական հաշվառման համակարգ, որը տրամադրում է ճշգրիտ, ամբողջական ու հավաստի տեղեկատվություն: Շահառուն պետք է նաև խելամտորեն պաշտպանի տվյալները, որոնք նպաստում են ֆիզիկական անձի (անհատական տվյալների) բացահայտմանը:

1.5 Շահառուին վերապահված խնդիրների իրականացման մասին հաշվետվությունը պետք է կազմվի հավելված 3-ում ներկայացված ձևին համապատասխան: Սակայն,

Ընդհանուր պայմանների հոդվածի 5-ին համապատասխան, ծրագրի գնահատման դեպքում, հաշվետվությունում պետք է հաշվի առնել Ընդհանուր պայմանների հոդված 5.3-ում նշված տիպային փաստաթղթերի պահանջները:

1.6 Այս դեպքում կառավարման հայտարարագրի մասին անկախ արտաքին աուդիտի (որը անցկացվում է միջազգայնորեն ընդունված աուդիտի չափանիշներիան համապատասխան) կարծիքի անհրաժեշտություն չկա, քանի որ Հանձնաժողովը իրականացնում է այդ աուդիտը: Այս աուդիտների ժամանակ կստուգվի կառավարման մասին հայտարարության ճշմարտացիությունը և կատարված գործարքների օրինականությունը և պարբերականությունը:

1.7 Շահառուն պետք է կիրառի Ֆինանսական Համաձայնագրի լեզուն՝ պայմանագրերի կնքման և դրամաշնորհների տրամադրման համար:

1.8 Շահառուն պետք է տեղեկացնի Հանձնաժողովին այն դեպքերում, երբ թեկնածուն, տենդերի մասնակիցը կամ դիմորդը դուրս է մնացել մրցութային ընթացակարգերից Հոդված 1.3 համաձայն և երբ կապալառուն կամ դրամաշնորհի Շահառուն մեղավոր է եղել սխալ հայտարարություններ անելու համար, կատարել է առանցքային վրիպումներ կամ խախտումներ ու խարդախություն, կամ ամրագրվել է նրա կողմից պայմանագրային պարտավորությունների լուրջ խախտում:

Նման դեպքերում, առանց վնասելու Հանձնաժողովի իրավասությանը՝ վարչական ու ֆինանսական պատժամիջոցներ կիրառել՝ համաձայն Եվրոպական Միության ընդհանուր բյուջեի Ֆինանսական կանոնակարգերի և Եվրոպական Զարգացման Հիմնադրամի (ԵԶՀ) համար կիրառվող համապատասխան դրույթների, կապալառուների նկատմամբ ֆինանսական պատժամիջոցները, ինչպես ամրագրված է հոդված 1.3-ում, կիրառվում են Շահառուի կողմից իր ազգային օրենսդրության համապատասխան՝ հետևելով մրցակցային ընթացակարգին և ապահովելով կապալառուի պաշտպանության իրավունքը: Նման ֆինանսական պատժամիջոցները կիրառվում են սահմանված ընթացակարգին համապատասխան ապահովելով կապալառուի կամ դրամաշնորհի Շահառուի պաշտպանության իրավունքը:

Գնումների և դրամաշնորհային պայմանագրեր կնքելիս Շահառուն կարող է հաշվի առնել, համապատասխան ձևով և իր պատասխանատվության շրջանակներում, այն տեղեկատվությունը, որը ներառված են կենտրոնական բացառման տվյալների բազայում: Մուտքը դեպի տեղեկատվության կարող է տրամադրվել կոնտակտային անձնաց միջոցով կամ խարհրդակցելով Հանձնաժողովի[1] հետ (Եվրոպական

[1] Շահառուին կտրվի իրավունք մուտք գործելու տվյալների բազակ կոնտակտային անձի միջոցով, երբ նա հաստատի Հանձնաժողովին, որ իրականացնում է տվյալների պատշպտանության համար համապատասխան միջոցառումներ Եվրապառլամենտի ու Խորհրդի №45/2001 Կանոնակարգին համապատասխան առ 18 դեկտեմբերի 2000թ. անհատների պաշտպանության մասին հաշվի առնելով անձնական տվյալների մշակումը հաստատությունների ու մարմինների կողմից ու այդ տվյալների ազատ շարժը:

Հանձնաժողով, Հանձնաժողովի բյոջեի, հաշվապահական հաշվառման բաժին, հաշվապահական հաշվառման աշխատակից, BRE2-13/505, B-1049 Բրյուսել, Բելգիա, BUDG-Co1EXL-DB@ec.europa.eu էլեկտրոնային փոստով, պատճենը՝ հատուկ պայմանների հոդված 3-ում նշված հանձնաժողովի հասցեով): Հանձնաժողովը կարող է հրաժարվել կապալառուին կամ դրամաշնորհային շահառուիվճարումներ կատարելուց բացառիկ դեպքերում:

1.9 Շահառուն պետք է պահպանի հետևյալ ֆինանսական և պայմանագրային փաստաթղթերը ֆինանսավորման համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից կամ ավելի վաղ ժամկետից, որը նախատեսված է որպես մեկնարկային ամսաթիվ Հատուկ պայմանների հոդված 6-ին համապատասխան, ավատի համար նախատեսված ժամկետից սկսած հինգ տարի ժամանակահատվածով, մասնավորապես.

Գնման ընթացակարգեր.

- կանխատեսման ծանուցում՝ գնման ծանուցման հրապարակման հիմքով և ցանկացած ուղղում
- առանձնացված անվանացանկի սահմանում
- առանձնացված անվանացանկի զեկույց (ներառյալ հավելվածները)
- առանձնացված անվանացանկի ծանուցման հրապարակման հիմք
- գրություններ՝ ուղղված առանձնացված անվանացանկում չընդգրկվածներին
- տենդերի հրավերք կամ դրան համարժեք
- տենդերի դոսյե՝ ներառյալ հավելվածները, պարզաբանումները, հանդիպումների արձանագրությունները, հարապարակման հիմքերը
- գնահատման կոմիտեի նշանակում
- տենդերի բացման զեկույց՝ ներառյալ հավելվածները
- գնահատում/բանակցությունների վերաբերյալ զեկույց՝ ներառյալ հավելվածները և ստացված հայտերը
- ծանուցման գրություն
- ուղեկցող փաստաթղթեր
- պայմանագրի ներկայացման ուղեկցող գրություն
- գրություններ՝ ձախողված թեկնածուներին
- շնորհման/չեղյալ հայտարարման ծանուցում՝ ներառյալ հրապարակման հիմքը
- ստորագրված պայմանագիր, փոփոխություններ, հավելումներ և անհրաժեշտ գրագրություն

Առաջարկների ընդունում և դրամաշնորհների ուղղակի շնորհում.

- գնահատման կոմիտեի նշանակում
- բացման և վարչական զեկույց՝ ներառյալ հավելվածները և ստացված դիմումները
- գրություններ՝ ձախողված և հաջողակ դիմորդներին բովանդակային փաստաթղթի գնահատման հիման վրա
- բովանդակային փաստաթղթի գնահատման զեկույց
- ամբողջական դիմումի կամ բանակցությունների զեկույցի գնահատման փաստաթուղթ՝ համապատասխան հավելվածների հետ միասին
- հասանելիության ստուգում և ուղեկցող փաստաթղթեր
- գրություններ՝ ձախողված և հաջողակ դիմորդներին՝ հաստատված ռեզերվային ցանկով
- պայմանագրի ներկայացման ուղեկցող գրություն
- շնորհման/չեղյալ հայտարարման ծանուցում՝ ներառյալ հրապարակման հիմքը
- ստորագրված պայմանագիր, փոփոխություններ, հավելումներ և անհրաժեշտ համապատասխանություն

Ծրագրի նախահաշվի դեպքում, ի լրումն բոլոր վերը նշվածի՝ նշված ուղեկցող փաստաթղթերը նաև բոլոր համապատասխան փաստաթղթերը կապված վճարումների, վերականգնման և ընթացիք ծախսերի:

Հոդված 2 Շահառուի Կողմից Գնումների ու Դրամաշնորհային Պայմանագրերի Կնքման Ժամկետները

2.1 Ֆինանսավորման համաձայնագրի իրականացման ընթացքում կողմերը պետք է ստորագրեն գնումների ձեռքբերման և դրամաշնորհային պայմանագրերը, սակայն ամենաուշը սույն Ֆինանսական Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց երեք տարվա ընթացքում:

Եթե գործողությունը ֆինանսավորվում է ԵԶՀ կողմից, Ընդհանուր պայմանների Հոդված 5-ում նշված ծրագրի նախահաշիվները պետք է նույնպես հաստավեն Հանձնաժողովի կողմից երեք տարվա ընթացքում:

Նշված երեք տարի ժամանակահատվածը չի կարող երկարաձգվել, բացառությամբ Հատուկ պայմանների հոդված 6-ում նշված դրույթների, երբ գործողությունը ֆինանսավորվում է ԵԶՀ կողմից:

2.2 Այնուամենայնիվ, ծրագրի իրականացման փուլում ցանկացած ժամանակ կարող են ստորագրվել հետևյալ գործարքները.

- Գնումների ձեռքբերման և դրամաշնորհային պայմանագրեր, որոնք կնքվում են ԵՋՀ կողմից ֆինանսավորվող ծրագրերի ընթացիկ հաշվի բաղադրիչի հիման վրա
- Ստորագրված գնումների ձեռքբերման և դրամաշնորհային պայմանագրերում կատարվելիք փոփոխությունները
- Առանձին գնումների ձեռքբերման պայմանագրերը, որոնք պետք է կնքվեն գնումների ձեռքբերման գործող պայմանագրերի վաղաժամկետ դադարեցման դեպքում:
- Ընդհանուր պայմանների հոդված 12-ում նշված խնդիրների իրականացման համար պատասխանատու կազմակերպության փոփոխման դեպքում, այս Ֆինանսավորման համաձայնագրի փոփոխությունը; փոփոխությունը պետք է նաև նախատեսի նոր ժամկետներ գնումների ձեռքբերման և դրամաշնորհային պայմանագրեր կնքելու համար հոդված 2.1-ին համապատասխան:

2.3 Այս Ֆինանսավորման համաձայնագրի երեք տարվա գործողության ավարտից հետո Շահառուի կողմից իրականացվող միջոցառումների ֆինանսական հաշվեկշիռը, որոնց համար պատշաճ կերպով պայմանագրեր չեն ստորագրվել, պետք է զրոյացվի Հանձնաժողովի կողմից:

2.4 Հոդված 2-ը չի կիրառվում որևէ չնախատեսված ծախսերի ֆնանսական հաշվեկշռի կամ առկա միջոցների նկատմամբ պայմանագրի վաղաժամկետ դադարեցումից հետո: Այդ հաշվեկշիռը կամ միջոցները կարող են օգտագործվել է ֆինանսավորելու Հոդված 2-ում նշված պայմանագրերը:

2.5 Գնումների ձեռքբերման կամ դրամաշնորհի պայմանագրերը, որոնց շրջանակներում ստորագրման պահից երեք տարվա ընթացքում չի կատարվել որևէ վճարում, պետք է ավտոմատ կերպով դադարեցվեն և դրա ֆինանսավորումը պետք է զրոյացվի:

Հոդված 3. Տեսանելիությունը

3.1 Շահառուն պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ ԵՄ կողմից ծրագրի ֆինանսավորման տեսանելիությունն ապահովելու համար: Դրանք սահմանվում են Հավելված I-ում (Տեխնիկական և ադմինիստրատիվ դրույթներ) կամ Շահառուի և Հանձնաժողովի միջև ձեռք բերված համաձայնությանը համապատասխան:

Իրազեկման ու տեղեկությունների տրամադրմանն ուղղված միջոցառումները պետք է իրականացվեն արտաքին գործողությունների թափանցիկության նպատակով

Հանձնաժողովի կողմից սահմանված և հրապարակված այն կանոններին, որոնք ուժի մեջ են այդ գործողությունների իրականացման պահին:

Հոդված 4. Դրույթներ Շահառուի Անունից Հանձնաժողովի Կողմից Կապալառուներին և Դրամաշնորհային Շահառուներին Կատարվող Վճարումների Վերաբերյալ

4.1 Շահառուն պետք է տրամադրի Հանձնաժողովին հաստատված վճարման պահանջագրեր հետևյալ ժամկետներում՝ սկսված վճարման պահանջագրի ստացվամ օրվանից, չհաշված վճարումների կասեցման ժամկետները.

Ա) Գնումների ձեռքբերման և, դրամաշնորհի պայմանագրում նշված նախնական ֆինանսավորման հետ կապված.

- 15 օրացուցային օր բյուջեից ֆինանսավորվող միջոցառման համար
- 30 օրացուցային օր ԵՋՀ շրջանակներում ֆինանսավորվող միջոցառման համար

Բ) 45 օրացուցային օր, այլ վճարումների համար:

Գնումների ձեռքբերման և դրամաշնորհային պայմանագրերի համար նախատեսված ժամկետի հետ կապված Հանձնաժողովը պետք է գործի Հոդվածներ 4.6 և 4.7-ին համապատասխան մինուս վերը նշված ժամկետները:

4.2 Կապալառուից կամ դրամաշնորհի շահառուից վճարման պահանջագիրը ստանալուց հետո Շահառուն պետք է տեղեկացնի այդ մասին Հանձնաժողովին և պետք է անմիջապես ստուգի պահանջագրի ընդունելիությունը, այսինքն, արդյոք այն պարունակում է կապալառուի կամ դրամաշնորհի շահառուի մասին տեղեկատվություն, պայմանագրի մասին տեղեկատվություն, գումարը, արժույթը և ամսաթիվը: Եթե Շահառուն եզրակացնում է, որ դիմում է ընդունելի չէ, այն պետք է մերժի և տեղեկացնի կապալառուին և դրամաշնորհային շահառուին մերժման և դրա պատճառների մասին վճարման պահանջագիրը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Շահառուն պետք է նաև տեղեկացնի Հանձնաժողովին այդ մերժման և դրա պատճառների մասին:

Ընդունելի վճարման պահանջագիրը ստանալուց հետո, Շահառուն պետք է ստուգի, թե արդյոք վճարումը պետք է կատարվի, այսինքն, արդյոք կատարել են վճարումը հիմնավորող բոլոր պայմանագրային պարտավորությունները, այդ թվում՝ ստուգման մասին հաշվետվությունը, ըստ անհրաժեշտության: Եթե Շահառուն եզրակացնում է, վճարումը ենթակա չէ կատարման, այն պետք է տեղեկացնի կապալառուին կամ դրամաշնորհային շահառուիդրա ու պատճառների մասին: Այդ տեղեկատվության փոխանցումը կասեցնում է վճարման ժամկետը: Այս տեղեկատվության պատճենը պետք է ներկայացվի Հանձնաժողովին: Հանձնաժողովը պետք է նաև տեղեկացվի

կապալառուի կամ դրամաշնորհի շահառուի պատասխանի կամ շտկող միջոցառումների վերաբերիալ: Պատասխան կամ այն գործողություն, որն ուղղված է վերացնելու անհամապատասխանությունը պայմանագրային պարտավորությունների հետ կապված պետք վերսկսի վճարման ժամկետը: Սույն կետին համապատասխան Շահառուն պետք է ստուգի պատասխանը կամ գործողությունը:

4.4 Եթե Հանձնաժողովը համաձայն չէ Շահառուի եզրակացության հետ, որ վճարումը ենթակա չէ կատարման նա պետք է տեղեկացնի Շահառուին այդ մասին: Շահառուն պետք է վերանայի իր դիրքորոշումը, և եթե եզրակացնում է, որ վճարումը պետք է կատարվի, ապա այդ մասին տեղեկացնում է կապալառուին կամ դրամաշնորհի շահառուին: Վճարման ժամկետի կասեցումը պետք է համարել չեղյալ այս տեղեկատվությունը ստանալու պահին: Շահառուն պետք է տեղեկացնի նաև Հանձնաժողովին: Շահառուն պետք է շարունակի գործել Հոդված 4.5-ին համապատասխան:

Եթե Շահառուի և Հանձնաժողովի միջև տարաձայնությունը չվերանա, Հանձնաժողովը կարող է վճարել գումարի անվիճելի մասը պայմանով, որ այն հստակ բաժանելի է վիճելի գումարից: Նա պետք է տեղեկացնի Շահառուին և կապալառուին կամ դրամաշնորհային շահառուիայդ մասնակի վճարի մասին:

4.5 Եթե Շահառուն եզրակացնում է, որ վճարումը պետք է կատարվի, այն պետք է ներկայացնի վճարման պահանջագիրը և բոլոր անհրաժեշտ ուղեկցող փաստաթղթերը Հանձնաժողով հաստատմանը և վճարմանը: Պետք է ներկայացվի տեղեկատվություն այն մասին, թե քանի օր է մնացել վճարման ժամկետից և այս ժամկետից սկսած բոլոր ժամկետների կասեցման մասին:

4.6 Հոդված 4.5-ին համաձայն վճարման պահանջագրի փոխանցումից հետո, եթե Հանձնաժողովը եզրակացնում է, որ վճարումը ենթակա չէ կատարման, նա պետք է տեղեկացնի Շահառուին այդ մասին, պատճենը ուղարկելով կապալառուին կամ դրամաշնորհային շահառուիդրա ու պատճառների մասին: Կապալառուին կամ դրամաշնորհային շահառուիտեղեկատվության ներկայացումը կունենա վճարման ժամկետի կասեցման ազդեցություն, ինչպես սահմանված է կնքված պայմանագրում: Շահառուն պետք է գործի կապալառուի կամ դրամաշնորհային շահառուի պատասխանի կամ շտկող միջոցառումների հետ կապված հոդված 4.3-ին համապատասխան:

4.7 Եթե Շահառուն և Հանձնաժողովը եզրակացնում են, որ վճարումը պետք է կատարվի, Հանձնաժողովը կատարում է վճարում:

4.8 Կապալառուին կամ դրամաշնորհային շահառուի ուշացած վճարումների դեպքում, Շահառուի և Հանձնաժողովի միջև պետք է կատարվեն հատկացումներ ուշացված ժամկետների հիման վրա, ինչպես սահմանված է հոդված 4.1-ում հետևյալ կերպ.

- օրերի քանակը, որի ընթացքում է Շահառուի վճարման ենթակա պահանջագիրը գրանցվելուց հետո, ինչպես նշված է հոդված 4.3-ում, փոխանցել է Հանձնաժողովին հոդված 4.5-ին համապատասխան, և այն օրվանից, երբ տեղեկատվությանը փոխանցվել է Հանձնաժողովի կողմից հոդված 4.6-ին համապատասխան մինչև պահանջագրի հաջորդ փոխանցումը Հանձնաժողովին հոդված 4.5-ին համապատասխան: Վճարման կասեցման ցանկացած ժամկետ պետք է հանվի:
- Հանձնաժողովի կողմից օգտագործված օրերի քանակը հաշվարկվում է Շահառուի կողմից պահանջագիրը փոխանցելու օրվանից հետո, ինչպես նշված է հոդված 4.5-ում մինչև վճարման օրը և փոխանցման օրվանից Շահառուին տեղեկացնելու օրը հոդվածի 4.6-ին համաձայն:

4.9 Վերը նշված ընթացակարգերում չնախատեսված ցանկացած հանգամանք պետք է լուծվի Շահառուի և Հանձնաժողովի միջև հագործակցության ոգով՝ վերը նշված դրույթներին համապատասխան, հարգելով պայմանագրային հարաբերությունները Շահառուի, կապալառուի և դրամաշնորհային շահառուի միջև:

Որտեղ հնարավոր է կողմերը պետք է համագործակցեն միմյանց հետ, տրամադրելով օգտակար տեղեկատվություն վճարման պահանջագրի գնահատման համար, նույնիսկ նախքան վճարման պահանջագիրը պաշտոնապես կփոխանցվի կամ կվերադարձվի մյուս կողմին:

Հոդված 5. Ծրագրի Նախահաշիվը

5.1 Երբ Շահառուն վստահված է կատարելու լրացուցիչ վճարումներ կապալառուներին, դրամաշնորհային շահառուներին և կամ ուղղակի աշխատանքի համատեքստում, այն պետք է կատարի այդ վճարումները Շահառուի և Հանձնաժողովի հետ նախօրոք համաձայնեցված ծրագրի նախահաշվի հիման վրա: Ընդհանուր պայմանների Հոդված 1.3 –ի դրույթները չեն կիրառվում գնումների նկատմամբ ուղղակի աշխատանքի համատեքստում:

5.2 Ծրագիրը նաշահաշիվը փաստաթուղթ է, որը ներառում է միջոցառումների ծրագիրը, որը պետք է իրականացվի, ինչպես նաև անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ, համապատասխան բյուջետային և մանրամասն տեխնիկական և վարչական գործողություններ նշված միջոցառումները սահմանված ժամկետներում իրականացնելը համար՝ գնումների, դրամաշնորհներ և/կամ ուղղակի աշխատանքի միջոցով:

Ծրագիրը նախահաշիվը պետք ունենա ընթացիկ գումարի բաղադրիչ և կոնկրետ պարտավորությունների բաղադրիչ:

Ծրագրի նախահաշվի ընթացիկ գումարի բաղադրիչին համաձայն, Շահառուն պետք է կատարի գնումների ձեռքբերման և դրամաշնորհային ընթացակարգեր և կատարի հարակից վճարումներ և ուղղակի աշխատանքի համար վճարումներ:

Կոնկրետ պարտավորությունների բաղադրիչին համաձայն, Շահառուն պարտավոր է իրականացնել խնդիրներ, ինչպես նշված է Ընդհանուր պայմանների հոդված 1.1-ի երկրորդ պարբերությունում: Հանձնաժողովը պետք է կատարի համապատասխան վճարումներ կապալառուին և դրամաշնորհային շահառուներին: Որոշ միջոցառումները, այդ թվում աուդիտները, գնահատումները և աջակցությունը շրջանակային պայմանագրի հետ կապված կարող են իրականացվել անմիջապես Հանձնաժողովի կողմից:

Եթե գործողությունը ֆինանսավորվում է ԵՋՀ շրջանակներում, հավելված 1-ում նկարագրված խնդիրները կարող են իրականացվել մասնավոր իրավունքի հիման վրա գործող մարմնի կողմից, սպասարկման պայմանագրի միջոցով, որը կնքվել է Շահառուի կողմից հոդված 1.3-ում նշված ընթացակարգերին և տիպային փաստաթղթերին համապատասխան:

5.3 Բոլոր ծրագրի նախահաշիվները, որոնք իրականացնում են ֆինանսավորման համաձայնագիրը, պետք է հաշվի առնեն ընթացակարգերը և տիպային փաստաթղթերը կապված ծրագրի նախահաշվի հետ և սահմանված Հանձնաժողովի կողմից նշված ծրագրի նախահաշվի հաստատման պահին:

Խնդիրների իրականացման համար պատասխանատու կազմակերպության ընթացիկ գործառնական ծախսերը, ինչպես նշված է Ընդհանուր պայմանների հոդվածներ 1.1-ում և 1.5-ում, ֆինանսավորվում են ԵՄ շրջանակներում ծրագրի նախահաշվի ընթավի բաղադրիչով այս Ֆինանսավորման Համաձայնագրի ողջ տևողության ընթացքում, եթե հատուկ պայմանների 6 - րդ հոդվածով ծախսերի հետ կապված ավելի վաղ ժամկետ սահմանված չէ: Այդ ծախսերը կարող են կատարվել բյուջեի կատարման հետ կապված խնդիրների շրջանակներում և ներառել տեղական անձնակազմ, կոմունալ (օրինակ ջուր, գազ և էլեկտրականություն) վճարումներ, տարածքների վարձակալում, պահպանման, կարճաժամկետ գործուղումներ և տրանսպորտային միջոցների վառելիք: Դրանք չեն նախատեսում տրանսպորտային միջոցի կամ որևէ այլ սարքավորման գնում կամ այլ միջոցառման իրականացում: Ընդհանուր պայմանների հոդվածներ 1.3-ը և 1.2-ը չեն կիրառվում այս ծախսերի նկատմամբ:

5.4 Շահառուն պետք է ներկայացնի Հանձնաժողովին տարեկան, մինչև հատուկ պայմանների հոդված 6-ում նշված ամսաթիվը, կառավարման հայտարարագիր, ստորագրած Շահառուի կողմից համապատասխան մակարդակով, հավելված 4-ում ներկայացված ձևի կիրառմամբ:

Հոդված 6. Շահառուին Կատարված Վճարումների Ընթացիկ Հաշվի Բաղադրիչի Հիման Վրա

6.1 Հանձնաժողովը դրամական միջոցները փոխանցում է Շահառուի կողմից ընդունելի վճարման պահանջագիրը գրանցելու ամսաթվից ոչ ուշ, քան 30 օրացուցային օր հետո, որտեղ ներառված են ամսաթիվը, գումարը և արժույթը: Վճարումները կատարելու ժամկետը կազմում է 90 օր: Ուշ վճարումը պետք է կատարվի կիրառելի ֆինանսական կանոններին համաձայն: Ժամկետը կարող է կասեցվել հանձնաժողովի կողմից տեղեկացնելով դրա մասին Շահառուին վերը ցանկացած ժամանակ վերը նշված ժամկետում, այն մասին որ վճարումը չի կարող կատարվել, որովհետև գումարը ենթակա չէ վճարման կամ այն պատճառով, որ համապատասխան փաստաթղթերը չեն ներկայացվել: Եթե Հանձնաժողովին հայտնի է դառնում այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում վճարման պահանջագրում առկա ծախսերի թույլատրելիությունը, Հանձնաժողովը կարող է երկարաձգել վճարման ժամկետը հետագա ստուգման, այդ թվում՝ տեղում ստուգում իրականացնելու համար, որպեսզի նախքան վճարումը համոզվի, որ այդ ծախսն իսկապես թույլատրելի է: Հանձնաժողովը հնարավորինս շուտ տեղեկացնում է Շահառուին կասեցման և դրա պատճառների մասին: Վճարման ժամանակային սահմանափակումը կարող է վերսկսել երբ ներկայացվում են համապատասխան փաստաթղթերը կամ վճարման պահանջագրում կատարվում են համապատասխան փոփոխությունները:

6.2 Հանձնաժողովը վճարումները կատարում է Հանձնաժողովի կողմից ընդունելի համարվող ֆինանսական հաստատությունում բացված բանկային հաշվին:

6.3 Շահառուն պետք է երաշխավորի, որ Հանձնաժողովի կողմից նախնական ֆինանսավորման կարգով տրամադրված դրամական միջոցները հնարավոր լինի նույնականացնել այս բանկային հաշվում:

6.4 Անհրաժեշտության դեպքում, եվրոյով կատարված փոխանցումները փոխարկվում են Շահառուի ազգային արժույթի այն դեպքում և երբ վճարումները պետք է կատարվեն Շահառուի կողմից, Շահառուի կողմից վճարումը կատարելու օրվա դրությամբ բանկում գործող փոխարժեքով:

6.5 Ծրագրի նախահաշվով ընթացիկ հաշվի բաղադրիչի դեպքում, որի արդյունքում Շահառուն 3 տարվա ընթացքում չի կատարել վճարում 3 տարի ընթացքում ծրագրի նախահաշիվը կազմելուց հետո պետք է ավտոմատ կերպով, դադարեցվի և գումարը պետք է համապատասխան զրոյացվի:

Հոդված 7. Շահառուի Կողմից Գնումների Ձեռքբերման և Դրամաշնորհային Պայմանագրերի Վերաբերյալ Տեղեկատվության Հարապարակումը

7.1 Շահառուն պարտավորվում է յուրաքանչյուր տարի իր կայք-էջի առանձնացված և տեսանելի մասում հրապարակել Ֆինանսավորման համաձայնագրով ֆինանսավորվող յուրաքանչյուր գնումի կամ դրամաշնորհայիին պայմանագրի անվանումը որի հետ կապված այն հանդիսանում է պայմանագիր կնքող կողմ, ինչպես նշված է Մաս 1-ում, դրամաշնորհի Շահառուի (դրամաշնորհի Շահառուների՝ բազմաթիվ Շահառուների ներգրավող դրամաշնորհի դեպքում) կամ մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի անվանումն ու կապալառուի գտնվելու վայրի (կոնսորցիումի դեպքում՝ կապալառուների), ինչպես նաև համապատասխան դրամաշնորհի կամ պայմանագրի արժեքը:

Ֆիզիկական անձի գտնվելու վայրը NUTS2 շրջանն է: Ֆիզիկական անձի բնակավայրը նրա հասցեն է:

Եթե հնարավոր չէ տեղեկությունները հրապարակել նշված կայք-էջի միջոցով, ապա դրանք պետք է հրապարակվեն ցանկացած այլ համապատասխան եղանակով՝ ներառյալ Շահառուի պաշտոնական տեղեկագրում հրապարակելու միջոցով:

Հատուկ պայմանների Հոդված 6-ին համապատասխան պետք է նշվի վայրը, ինտերնետում կամ այլ տեղ, հրապարակման վայրը; հղում պետք է կատարվի այդ վայրի վրա Հանձնաժողովի կայքում հատուկ տեղում:

ֆիզիկական անձանց տրամադրվող կրթաթոշակի և կարիքավորներին անմիջական ֆինանսական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է անանուն և կուտակված ծախսերի ձևով:

Այլ կերպ, ֆիզիկական անձանց անունները պետք է փոխարինել «ֆիզիկական անձ» արտահայտությունով հրապարակման պահից երկու տարի հետո: Իրավաբանական անձի անունը կապված այդ ֆիզիկական անձի հետի համարվում այդ ֆիզիկական անձի անունը:

Ֆիզիկական անձանց անուններով հրապարակումներ չպետք է կատարվեն, եթե այդպիսի հրապարակման հետ կապված ռիսկերը խախտում են իրենց իրավունքները կամ վնասելու նրանց շահերը:

Շահառուն պետք է ներկայացնի հրապարակող ֆիզիկական անձանց տվյալների ցանկը Հանձնաժողովին, հիմնավորելով հրապարակման անհրաժեշտությունը, որը պետք է տրամադրի նախնական համաձայնություն այս ցուցակին: Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովն սահմանափակում է ֆիզիկական անձի բնակավայրի NUTS2 տարածաշրջանային մակարդակով:

7.3 Տեղեկությունների հրապարակումը պետք է իրականացվի այն տարվա ավարտին հաջորդող տարվա առաջին կեսի ընթացքում, երբ Շահառուի կողմից կնքվել են պայմանագրերը (այսինքն Շահառուի և կապալառուի կամ դրամաշնորհային շահառուի կողմից ստրագրված) և տրամադրվել են դրամաշնորհները Հատուկ պայմանների Հոդված 6-ի համապատասխան:

7.4 Պայմանագրերը կարող են չհրապարակվել, եթե հրապարակումը կվնասի կապալառուներ և դրամաշնորհային շահառուների առևտրային շահերին: Շահառուն պետք է ներկայացնի Հանձնաժողովին չհրապարակման հիմնավորում, որը պետք է տրամադրի նախնական համաձայնության հրապարակումից հրաժարվելու համար:

Հոդված 8. Ծախսերի Վերադարձը

8.1 Շահառուն պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ վերադարձնելու սխալ կատարված վճարումները:

Սխալ կատարված վճարումների, պայմանագրերի կնքման ընթացակարգերի հիման վրա կամ սույն Ֆինանսավորման համաձայնագրի համաձայն տրամադրված ֆինանսական երաշխիքների իրականացման դիմաց փոխհատուցված գումարները, ինչպես նաև թեկնածուի, մրցույթի մասնակցի, կատարողի կամ դրամաշնորհային շահառուի նկատմամբ Շահառուի կողմից կիրառվող ֆինանսական տուժանքները ուղղվում են Հանձնաժողովի բյուջե: Հասցված վնասի դիմաց Շահառուին փոխհատուցվող միջոցները նույնպես վերադարձվում են Հանձնաժողովին:

8.2 Չհակասելով Շահառուի վերոնշյալ պատասխանատվությանը վերադարձնելու սխալ կատարված վճարումները, Շահառուն կարող է համաձայնենցել Հանձնաժողի հետ գործող ֆինանսական փաստաթղթերում և այս ֆինանսավորման համաձայնագրում ներառված դրույթներին համապատասխան, պաշտոնապես հաստատել գումարը որպես անհարկի վճարման ենթակա գնումների ձեռքբերման ու դրամաշնորհային պայմանագրերի շրջանակներում և կատարել դրա վերադարձը ցանկացած միջոցներով Շահառուի անունից, ներառյալ վերադարձնելով գումարը որը պարտք է կապալառուին կամ դրամաշնորհային շահառուին ԵՄ-ին իր պահանջի դիմաց:

8.3 Այս նպատակով Շահառուն պետք է տրամադրի Հանձնաժողովին բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները, ըստ անհրաժեշտության: Շահառուն դրանով իսկ լիազորում է Հանձնաժողովին կատարել ծախսերի վերադարձ պայմանագիր կնքող կողմ կամ վերադարձնի գումարը դրամաշնորհի շրջանակներում, եթե Շահառուն հանդիսանում է պայմանագիր կնքող մարմին կամ վերադարձնելով գումարը կապալառուին կամ դրամաշնորհային շահառուին պարտքի դիմաց ԵՄ կողմից ֆինանսավորվող կամ այլ ֆինանսական համաձայնագրի շրջանակներում:

8.4 Հանձնաժողովը պարտավոր է տեղեկացնել Շահառուին, որ գումարի վերադարձի գործընթացի մեկնարկի մասին (ներառյալ, անհրաժեշտության դեպքում, դատարանի միջոցով):

8.5 Եթե Շահառուն պատվիրակված անձ է, որի հետ Հանձնաժողովը կնքել է անուղղակի կառավարման համաձայնագիր, Հանձնաժողով կարող է վերադարձնել

միջոցներ Շահառուին, որոնք պետք է վերադարձվեն հաստատությանը, բայց հաստատությունը չի կարողանում վերադարձնել ինքնուրույն:

Հոդված 9. Դրամաշնորհային Պայմանագրերին և Գնումներին Ներկայացվող Ֆինանսական Պահանջները

Շահառուն պարտավորվում է Հանձնաժողովի հետ խորհրդակցել նախքան կատարողի կողմից ներկայացված և Շահառուի կողմից ամբողջությամբ կամ մասամբ արդարացված համարվող փոխհատուցման հարցման վերաբերյալ ցանկացած որոշում կայացնելը: Ֆինանսական հետևանքները կարող է կրել միայն ԵՄ–ն, եթե Հանձնաժողովը տվել է իր նախնական հավանությունը: Հանձնաժողովի նախնական հավանությունն անհրաժեշտ է նաև այն միջոցների ցանկացած օգտագործման համար, որոնց մասով սույն Ֆինանսավորման համաձայնագրի ներքո պարտավորություն է ստանձնվել՝ պայմանագրերի հետ կապված վեճերից բխող ծախսերը ծածկելու համար:

Հոդված 10. Գերծախսերը և Դրանց Ֆինանսավորումը

10.1 Ֆինանսավորման համաձայնագրի բյուջեի հոդվածների գծով Շահառուի կողմից կատարված առանձին գերածախսերը ծածկվում են ընդհանուր բյուջեում միջոցների վերաբաշխմամբ՝ սույն Ընդհանուր պայմանների 26–րդ հոդվածի համաձայն:

10.2 Ֆինանսավորման համաձայնագրով սահմանված ընդհանուր գումարի գերածախսի վտանգի առկայության դեպքում, Շահառուն անմիջապես տեղեկացնում է Հանձնաժողովին և հայցում վերջինիս նախնական համաձայնությունը գերածախսը ծածկելու համար ծրագրվող ուղղիչ միջոցների վերաբերյալ՝ առաջարկելով կամ կրճատել ծրագրի միջոցները կամ օգտագործել սեփական միջոցները, կամ ներգրավել այլ՝ ոչ ԵՄ միջոցներ:

10.3 Եթե ծրագրի միջոցները չեն կարող կրճատվել, կամ եթե գերածախսը չի կարող ծածկվել Շահառուի սեփական կամ այլ միջոցներով, Հանձնաժողովը կարող է, Շահառուի կողմից պատշաճ կերպով հիմնավորված դիմումի հիման վրա, ԵՄ–ի միջոցներից լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու մասին որոշում կայացնել: Եթե Հանձնաժողովը նման որոշում է կայացնում, լրացուցիչ ծախսերը, չհակասելով ԵՄ համապատասխան կանոններին և ընթացակարգերին, ֆինանսավորվում են Հանձնաժողովի կողմից սահմանվելիք լրացուցիչ ֆինանսական օժանդակության տրամադրման միջոցով: Այս ֆինանսական համաձայնագրում պետք է կատարվեն համապատասխան փոփոխություններ:

ՄԱՍ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 11.Քաղաքական Երկխոսությունը

Այս ֆինանսավորման համաձայնագրի իրականացման հետ կապված Շահառուն և ԵՀ պարտավորվում են իրականացնել կանոնավոր կառուցողական երկխոսության համապատասխան մակարդակի վրա:

Հոդված 12.1. Պայմանների և Փոխհատուցման Ստուգումը

12.1 Հանձնաժողովը պետք է ստուգի բյուջեի աջակցության բաղադրիչի տրանշի վճարման պայմանները, ինչպես նշված է հավելված 1-ում (Տեխնիկական և ադմինիստրատիվ դրույթները):

Եթե հանձնաժողովը եզրակացնում է, որ վճարման պայմանները չեն կատարվում այն պետք է անհապաղ տեղեկացնի Շահառուին այդ մասին:

12.2 Շահառուի կողմից ներկայացված փոխհատուցման հայտերը պետք է ֆինանսվորվեն ԵՀ կողմից, պայմանով, որ դրանք համապատասխանում են հավելված 1 ամրագրված դրույթներին(տեխնիկական և ադմինիստրատիվ դրույթները) և, որ դրանք ներկայացվել են ծրագրի իրականացման փուլում:

12.3 Շահառուն պետք է կիրառի իր ազգային արտարժույթի կանոնակարգերը է համապատասխանաբար բյուջետային աջակցության բաղադրիչի շրջանակներում կատարվող փոխհատուցումների դեպքում:

Հոդված 13. Թափանցիկությունը և Բյուջետային Աջակցությունը

Շահառուն սույնով համաձայնվում է, որ Հանձնաժողովը հրապարակի այս Ֆինանսավորման համաձայնագիրը և դրանում կատարված ցանկացած փոփոխություն, այդ թվում էլեկտրոնային եղանակով, բյուջետային աջակցության հիմնական տեղեկությունը, որը Հանձնաժողովը համարում տեղին: Նման հրապարակումը չպետք է պարունակի տվյալներ, որոնք խախտում են ԵՄ օրենսդրությունը անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ:

Հոդված 14. Բյուջետային Աջակցության Վերականգնումը

Բյուջետային աջակցության փոխհատուցումների ամբողջ կամ մի մասը կարող են վերականգնվել Հանձնաժողովի կողմից հաշվի առնելով համաչափության սկզբունքները, եթե Հանձնաժողովը գտնում է, որ վճարումը խախտվում է Շահառուի

կողմից, մասնավորապես, եթե Շահառուն ներկայացրել է անհավաստի ու սխալ տեղեկատվություն, կամ եթե առկա է կոռուպցիա կամ խարդախություն:

ՄԱՍ 3. ԴՐՈՒՅԹՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԱՆԿԱԽ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԵԺԻՄԻՑ

Հոդված 15. Կատարման ժամկետը ու Պայմանագրային ժամկետը Ուղակի Կառավարման Դեպքում

15.1 Ֆինանսավորման համաձայնագրի կատարման ժամկետը բաղկացած է երկու փուլից՝

- իրականացման փուլ, որի ընթացքում կատարվում են հիմնական աշխատանքները: Այս փուլն սկսվում է Ֆինանսավորման համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից և ավարտվում ավարտական փուլն սկսվելուց.
- ավարտական փուլ, որի ընթացքում իրականացվում է վերջնական աուդիտ և գնահատում, իսկ Ֆինանսավորման համաձայնագրի իրականացման պայմանագրերը և ծրագրի նախահաշիվները տեխնիկապես և ֆինանսապես համարվում են կատարված: Այս փուլի տևողությունը սահմանվաշ է Հատուկ պայմանների հոդված 2.3-ում: Այն սկսվում է իրականացման փուլի ավարտից հետո:

Այդ ժամկետները պետք է արտացոլվեն Շահառուից և հանձնաժողովի միջև կնքված համաձայնագրում կապվաշ սույն ֆինանսավորման համաձայնագրի իրականացման հետ մասնավորապես պատվիրակության համաձայնագրերում և գնման և դրամաշնորհային պայմանագրերում:

15.2 Հիմնական աշխատանքների հետ կապված ծախսերը ենթակա են ԵՄ–ի կողմից ֆինանսավորման միայն այն դեպքում, երբ դրանք առաջացել են իրականացման փուլում: Մինչև Սույն Ֆինանսավորման համաձայնագրի մեջ մտնելը Շահառուից կողմից կատարված ծախսերը չեն ֆինանսավորվում ԵՄ կողմից եթե այլ կերպ նախատեսված չէ հատուկ պայմաններում հոդված 6-ում: Վերջնական աուդիտի և գնահատման ու ավարտական աշխատանքների հետ կապված ծախսերը ենթակա են ծածկման մինչև ավարտական փուլի ավարտը:

15.3 ԵՄ–ի օժանդակության տրամադրումից հետո առկա ֆինանսավորման մնացորդային արժեքը չեղյալ է համարվում կատարման ժամկետի ավարտից վեց ամիս հետո:

15.4 Բացառիկ և պատշաճ կերպով հիմնավորված դեպքերում կարող է ներկայացվել իրականացման փուլի և համապատասխանաբար կատարման ժամկետի երկարաձգման մասին դիմում: Եթե երկարաձգման դիմումը ներկայացնում է Շահառուն, այն պետք է ներկայացվի իրականացման փուլի ավարտից առնվազն

երեք ամիս առաջ և հաստատվի Հանձնաժողովի կողմից նախքան այդ ժամկետը: Այս ֆինանսական համաձայնագրում պետք է կատարվեն համապատասխան փոփոխություններ:

15.5 Բացառիկ և պատշաճ կերպով հիմնավորված դեպքերում նաև իրականացման փուլի ավարտից հետո կարող է ներկայացվել ավարտական փուլի և համապատասխանաբար կատարման ժամկետի երկարաձգման մասին դիմում: Եթե երկարաձգման մասին դիմումը ներկայացնում է Շահառուն, այն պետք է ներկայացվի ավարտական փուլի ավարտից առնվազն երեք ամիս առաջ և հաստատվի Հանձնաժողովի կողմից նախքան այդ ժամկետը: Այս ֆինանսական համաձայնագրում պետք է կատարվեն համապատասխան փոփոխություններ:

15.6 Ընդհանուր պայմանների Հոդված 2-ը տարածվում է այն միջոցառումների նկատմամբ որոնք իրականացվում են հանձնաժողովի կողմից, որպես պայմանագիր կնքող կողմ (ուղղակի կառավարման), բացառությամբ հոդված 2.1-ի երկրորդ և երրորդ պարբերության: ուղղակի կառավարման աուդիտի և գնահատման Նպատակով պայմանագրերում կարող են կատարվել փոփոխություններ հաշվի հոդված 2.2-ում նախատեսված բացառությունները:

Հոդված 16. Հանձնաժողովի՝ Կեղծիքի Դեմ Պայքարի Եվրոպական Գրասենյակի (OLAF) Եվ Եվրոպական Վերահսկիչ Պալատի Կողմից Իրականացվող Հավաստիացումներ Եվ Ստուգումներ

16.1 Շահառուն պետք է աջակցի Հանձնաժողովիո Կեղծիքի Դեմ Պայքարի Եվրոպական Գրասենյակի (OLAF) Եվ Եվրոպական Վերահսկիչ Պալատի Կողմից Իրականացվող Հավաստիացումներ Եվ Ստուգումնեի իրականացմանը:

Շահառուն համաձայնություն է տալիս, որ համաձայնագրի գործողության ամբողջ ընթացքում և վերջին վճարման օրվան հաջորդող յոթ տարվա ընթացքում Հանձնաժողովը, Կեղծիքի դեմ պայքարի եվրոպական գրասենյակը (OLAF) և Եվրոպական վերահսկիչ պալատը իրականացնեն ֆինանսավորման համաձայնագրի շրջանակում ԵՄ ֆինանսական միջոցների օգտագործման փաստաթղթային և տեղում ստուգումներ (ներառելով՝ պայմանագրերի կնքման և դրամաշնորհների տրամադրման ընթացակարգերը) և, անհրաժեշտության դեպքում, համալիր աուդիտ՝ հաշիվների հիմնավորող փաստաթղթերի, հաշվապահական փաստաթղթերի և ծրագրի ֆինանսավորմանն առնչվող բոլոր այլ փաստաթղթերի հիման վրա:

16.2 Շահառուն նաև համաձայնություն է տալիս, որ Կեղծիքի դեմ պայքարի եվրոպական գրասենյակը կարող է իրականացնել հավաստիացումներ և ստուգումներ ԵՄ օրենդրությամբ սահմանված ընթացակարգերի համաձայն՝

կեղծիքից և այլ կարգազանցություններից ԵՄ ֆինանսական շահերը պաշտպանելու նպատակով:

16.3. Այս նպատակով Շահառուն, No2185/95 (ԵՀ Եվրատոմ) No 883/2013(ԵՀ Եվրատոմ) կանոնակարգերին համապատասխան պարտավորվում է Հանձնաժողովի, Կեղծիքի դեմ պայքարի եվրոպական գրասենյակի և Եվրոպական վերահսկիչ պալատի պաշտոնյաներին և դրանց լիազոր գործակալներին ապահովել ֆինանսավորման համաձայնագրով ֆինանսավորվող գործառնությունների տեղանքների և վայրերի, այդ թվում՝ դրանց համակարգչային համակարգերի մատչելիությունը, տրամադրել բոլոր փաստաթղթերը և համակարգչայնացված տվյալները, որոնք վերաբերում են այդ գործառնությունների տեխնիկական և ֆինանսական կառավարմանը և ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները նրանց աշխատանքը կազմակերպելու համար: Հանձնաժողովի, Կեղծիքի դեմ պայքարի եվրոպական գրասենյակի և Եվրոպական վերահսկիչ պալատի լիազոր գործակալների համար նման մատչելիությունն ապահովվում է երրորդ անձի այդ տեղեկությունները չտրամադրելու պայմաններով՝ չխախտելով նրանց վրա տարածվող ընդհանուր օրենսդրության պարտավորությունները: Փաստաթղթերը պետք է մատչելի լինեն և պահվեն դրանց ստուգումը հեշտացնող ձևով, իսկ Շահառուն պարտավոր է հայտնել Հանձնաժողովին, Կեղծիքի դեմ պայքարի եվրոպական գրասենյակին կամ Եվրոպական վերահսկիչ պալատին դրանց պահպանման ճշգրիտ վայրը:

16.4. Վերը նկարագրված ստուգումներն ու աուդիտները տարածվում են նաև ԵՄ ֆինանսավորում ստացած կապալառուների և ենթակապալառուների վրա:

16.5. Հանձնաժողովի, Կեղծիքի դեմ պայքարի եվրոպական գրասենյակի կամ Եվրոպական վերահսկիչ պալատի նշանակած գործակալները ծանուցում են Շահառուին տեղում ստուգումներ կատարելու առաքելությունների մասին:

Հոդված 17. Կարգազանցությունների, Կեղծիքի և Կոռուպցիայի Կանխարգելման հետ Կապված Շահառուի Խնդիրները

17.1 Շահառուն անհապաղ տեղեկացնում է Հանձնաժողովին իր ուշադրությանն արժանացած ցանկացած խնդրի մասին, որը խախտման կամ խարդախության և դրանք կարգավորելու ուղղությամբ ձեռնարկված ցանկացած միջոցի կասկած է հարուցում:

17.2 Շահառուն պարտավորվում է ապահովել և պարբերաբար ստուգել, որ ԵՄ հիմնադրամների հաշվին ֆինանսավորվող գործառնությունները իրականացվեն պատշաճ կերպով: Շահառուն համապատասխան միջոցներ է ձեռնարկում խախտումները և խարդախությունը կանխելու և, հարկ եղած դեպքում, սխալ

վճարված գումարները վերադարձնելու նպատակով դատական հետապնդում նախաձեռնելու համար:

«Խախտում» նշանակում է Ֆինանսավորման համաձայնագրի, կիրարկող պայմանագրերի, կամ ծրագրի նախահաշիվների կամ ԵՄ իրավունքի ցանկացած խախտում, որը տնտեսվարող սուբյեկտի կողմից ձեռնարկված գործողության կամ անգործության հետևանք է, և վնաս է հասցնում կամ կարող է վնաս հասցնել ԵՄ ընդհանուր բյուջեին՝ ուղղակիորեն ԵՄ–ի անունից հավաքագրված իր սեփական միջոցներից կուտակված եկամտի նվազեցման կամ կորստի կամ չհիմնավորված ծախսերի միջոցով:

«Խարդախություն» նշանակում է ցանկացած դիտավորյալ գործողություն կամ անգործություն, որը վերաբերում է՝

- կեղծ, ոչ ճշգրիտ կամ ոչ ամբողջական հաշվետվություններ կամ փաստաթղթեր օգտագործելուն կամ ներկայացնելուն, ինչը հանգեցնում է ԵՄ–ի կամ ԵԶՖ-ի բյուջեից միջոցների յուրացման կամ ապօրինի պահման.
- որոշակի պարտավորության խախտմամբ տեղեկություններ չբացահայտելուն, ինչը հանգեցնում է միևնույն հետևանքների.
- այդ միջոցները՝ դրանց տրամադրման համար նախապես սահմանված նպատակներից բացի այլ նպատակներով վատնելուն:

17.3 Շահառուն ձեռք է առնում բոլոր անհրաժեշտ միջոցները վերացնելու ակտիվ և պասիվ կոռուպցիայի դրսևորումների բոլոր հետևանքները՝ Ֆինանսական համաձայնագրի իրականացման ընթացքում.

«Պասիվ կոռուպցիան» նշանակում է պաշտոնյայի միտումնավոր գործողություն, ով միտումնավոր կամ միջնորդավորված ձևով խնդրում կամ ստանում է ցանկացած տիպի առավելություններ իր կամ երրորդ կողմի համար կամ ստանում է այդպիսի առավելության խոստում խուսափելու իր պարտավորությունից կամ իր գործառույթներն իրականացնելուց՝ խախտելով իր պաշտոնական պարտավորությունները, ինչն էլ կվնասի ԵՄ ֆինանսական շահերը:

«Ակտիվ կոռուպցիան» նշանակում է ինչ-որ մեկի միտումնավոր գործողություն, ով միտումնավոր կամ միջնորդավորված ձևով ցանկացած տեսակ առավելություն է տալիս որևէ պաշտոնյայի, իր կամ երրորդ կողմի համար խուսափելու իր պարտավորությունից կամ իր գործառույթներն իրականացնելուց՝ խախտելով իր պաշտոնական պարտավորությունները, ինչն էլ կվնասի ԵՄ ֆինանսական շահերը:

17.4 Շահառուն անհապաղ Հանձնաժողովին է ներկայացնում այն տնտեսվարող սուբյեկտների անվանումները (Ընդհանուր պայմաններ, հոդված, 3-րդ ենթապարբերություն), որոնց նկատմամբ՝ ԵՄ–ի ֆինանսական շահերին վնասող խարդախության, կոռուպցիայի, հանցավոր համագործակցության մեջ ներգրավվելու

կամ ցանկացած այլ անօրինական գործողության առնչությամբ կայացվել է դատական վճիռ, որը վերանայման ենթակա չէ:

17.5Եթե Շահառուն անհրաժեշտ միջոցքներ ձեռք չի ձեռնարկում կոռուպցիայի և կեղծարարության հետևանքները վերացնելու ուղղությամբ, Հանձնաժողով կարող է ձեռնարկել կանխարգելիչ միջոցներ, ներառյալ Ֆինանզական համաձայնագրի կասեցումը:

Հոդված 18 Վճարումների Կասեցումը

18.1 Չհակասելով ֆինանսավորման համաձայնագրի հոդվածներ 27 և 28-ում սահմանված կասեցման կամ դադարեցման պայմաններին համապատասխանաբար Հանձնաժողովը կարող է կասեցնել վճարումները, ամբողջությամբ կամ մասամբ եթե.

- Հանձնաժողովն ունի ապացույցներ, որ Շահառուն կատարել էական սխալներ, խախտումներ կամ խարդախություններ գնումների ձեռքբերման և դրամաշնորհների ընթացակարգերում կամ իրականացվող միջոցառումներում կամ Շահառուին չի կատարել իր պարտավորությունները սույն Ֆինանսավորման համաձայնագրին համապատախսան, այդ թվում՝ կապի և տեսանելիության պլանում սահմանված պարտավորությունների կատարման հետ կապված,
- Հանձնաժողովն ունի ապացույցներ, որ Շահառուն կատարել է կանոնավոր կամ հերթական սխալներ, թերություններ, խարդախության կամ խախտումներ ֆինանսական համաձայնագրեր պարտավորությունների հետ կապված, պայմանով, որ այդ սխալները, խախտումների, խարդախության կամ խախտումները ունեն էական նյութական ազդեցություն ֆինանսավորման համաձայնագրի իրականացման վրա կամ կասկածի տակ են դնում Շահառուի հուսալիությունը կապված ներքին հսկողության համակարգի կամ ծախսերի օրինականության և կանոնավորության հետ,
- Հանձնաժողովը կասկածում է, որ Շահառու կատարել էական սխալներ, խախտումներ, խարդախության պարտավորությունների չկատարման հետ կապված՝ գնումների ձեռքբերման և դրամաշնորհային պայմանագրերի ընթացակարգերին համաձայան կամ իրականացված միջոցառումներում, և պետք է կատարի համապատասխան ստուգում:
- Անհրաժեշտ է կանխել ԵՄ ֆինանսական շահերին հասվող զգալի վնասը

18.2 Հանձնաժողովը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Շահառուին վճարումների կասեցման և կասեցման պատճառների մասին:

18.3 Կասեցման վճարումները ազդեցություն կունենան վճարումների ժամկետները վրա:

18.4 Վճարումները վերսկսելու համար Շահառուն պետք է ջանքեր գործադրի լուծելու իրավիճակը, որի արդյունքում առաջացել է կասեցումը որքան հնարավոր է շուտ, և պետք է տեղեկացնի Հանձնաժողովին այս առումով ցանկացած առաջընթացի վերաբերյալ: Հանձնաժողովը, վճարումների վերականգնման հետ կապված պայմանների բավարար լինելու դեպքում, կտեղեկացնի Շահառուին դրա մասին:

Հոդված 19. Հանձնաժողովի Վերականգնված Միջոցների Հատկացումը (Ֆինանսավորման համաձայնագիր, հիմնական դրույթ, հոդված 16.2)

Եթե գործողությունը ֆինանսավորվում է ԵԶՀ շրջանակներում, անտեղի վճարված ու Հանձնաժողովի կազմից վերականգնված վճարումները, ֆինանսական երաշխիքները գնումների դրամաշնորհային ընթացակարգերին համապատասխան, ֆինանսական տույժերը կիրառված մրցույթի թեկնածուների, դիմորդների, կապալառուների նկատմամբ կամ Շահառուների նկատմաբ, ինչպես նաև Հանձնաժողովին պատճառած վնասները նախատեսվում են այս գործողության շրջանակներում:

Հոդված 20. Հիմնադրումը և Բնակության **(Գտնվելու Վայրի) Իրավունքը**

20.1 Պայմանագրի բնույթով արդարացված լինելու դեպքում աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման կամ մատակարարման պայմանագրերի կնքման համար մրցույթի հրավեր ստացած ֆիզիկական և իրավաբանական անձինք օգտվում են Շահառու երկրի տարածքում (տարածքներում) ընկերությունների հիմնադրման բնակության (գտնվելու վայր ունենալու) ժամանակավոր իրավունքից: Այս իրավունքը պահպանվում է պայմանագիրը կնքելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

20.2 Գնումների ձեռքբերման կապալառուներին, դրամաշնորհային շահառուներին, հաստատություններին, որոնց ծառայությունները պահանջվում են պայմանագրի կատարման համար, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները ծրագրի իրականացման ընթացքում Շահառուն տրամադրում է միևնույն իրավունքները:

Հոդված 21. Հարկային և **Մաքսային Դրույթները**

21.1 Շահառուն գնման պայմանագրերի և ԵՄ–ի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհների նկատմամբ կիրառում է հարկային մաքսային առավել բարենպաստ ռեժիմները, որոնք կիրառվում են այն պետությունների կամ

զարգացման միջազգային կազմակերպությունների նկատմամբ, որոնց հետ այդ պետությունն ունի հաստատված հարաբերություններ:

Եթե Շահառուն ԱԿԽ պետություն է այն միջոցառումները որոնք կիրառվում են այլ ԱԿԽ պետությունների կամ այլ զարգացող պետությունների նկատմամբ չպետք է հաշվի առնել տվյալ պետության համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու համար:

21.2 Եթե կիրառվում է Շրջանակային համաձայնագիրը, որը ներառում է թեմայի վերաբերյալ ավելի մանրամասն դրույթներ, ապա նշված դրույթները նույնպես կիրառվում են:

Հոդված 22. Գաղտնիությունը

22.1 Շահառուն համաձայնում է, որ իրեն պատկանող փաստաթղթերը, որոնք գտնվում են հաստատության տնօրինության տակ, որին Հանձնաժողովը հանձնարարել է իրականացնել բյուջեի կատարման խնդիրները այս կամ մեկ այլ ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում կարող են փոխանցվել Հանձնաժողովին այդ անձի կողմից միայն այդ խնդիրների կատարման մոնիտորինգի նպատակով:

Հանձնաժողովը պետք է հարգի Շահառուի և այդ հաստատության միջև համաձայնեցված գաղտնիության պայմանավորվածությունները:

2.2 Չհակասելով Ընդհանուր պայմանների հոդված 16-ում սահմանված դրույթներին, Շահառուն և Հանձնաժողովը պետք է պահպանեն Ֆինանսավորման համաձայնագրի իրականացման հետ ուղղակիորեն կապված որևէ փաստաթղթի, տեղեկատվության կամ այլ նյութի գաղտնիությունը,որը դասակարգվում է որպես գաղտնի:

2.3 Կողմերը պետք է ձեռք բերեն միմյանց գրավոր համաձայնությունը, մինչև նման տեղեկատվության հրապարակումը: Կողմերը պետք է մնամ պարտավորված գաղտնիությամբ իրականացման ժամկետի ավարտից մինչև 5 տարի:

Հոդված 23. Տվյալների Պաշտպանությունը

23.1 Շահառուն պետք է ապահովի անձնական տվյալների ողջամիտ պաշտպանությունը: Անձնական տվյալներ նշանակում է որևէ տեղեկություն Ֆիզիկական անձի վերաբերյալ: Ցանկացած գործողություն, որը կատարվում է անձնական տվյալների հետ, ինչպիսիք են հավաքումը, հաշվառումը, կազմակերպումը, պահպանումը, ադապտացիան կամ վերափոխումը, փնտրումը, խորհրդատվության տրամադրումը, օգտագործումը, հրապարակումը, ոչնչացումը

պետք է հիմնված լինի Շահառուի կանոնների և ընթացակարգերի վրա և պետք է կատարվի միայն այս ֆինանսավորման համաձայնագրի իրականացման համար:

23.2 Մասնավորապես, կազմակերպությունը պետք է ձեռնարկի համապատասխան տեխնիկական և կազմակերպական անվտանգության միջոցներ, որոնք առնչվում ռիսկերի հետ, որոնք բնորոշ են ցանկացած նման գործողությանը և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկատվության բնույթին.

- Կանխելու չարտոնված անձանց մուտքը համակարգչային համակարգերին, որոնք կատարում են նման գործողություններ, և հատկապես կրիչների չարտոնված ընթենցումը, պատճենահանումը, փոփոխությունը կամ հեռացումը; չթույլատրված տվյալների մուտքագրման, ինչպես նաև ցանկացած պահվող տեղեկությունների չթույլատրված բացահայտումը, փոփոխությունը կամ ոչնչացումը,
- Ապահովելու, որ SS համակարգի լիազորված օգտվողները, որոնք կատարում են նման գործողություններ, կարողանան մուտք գործել միայն այն տեղեկատվությանը, որը նրանց իրավասությունների շրջանակներում է,
- Նախագծելու իր կազմակերպական կառուցվածքը այնպես, որ այն համապատասխանի վերը նշված պահանջներին:

Հոդված 24. Ուսումնասիրությունների Օգտագործումը

Ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում ուսումնասիրության կատարման ֆինանսավորման մասին պայմանագրի կնքումը պետք է ներառի Շահառուի և Հանձնաժողովի իրավունքը օգտագործելու, հրապարակելու և երրորդ անձանց բացահայտելու այդ ուսումնասիրությունը :

Հոդված 25. Հանձնաժողովի և Շահառուի Միջև Խորհրդակցությունը

25.1 Շահառուն և Հանձնաժողովը խորհրդակցում են միմյանց հետ նախքան սույն Ֆինանսավորման համաձայնագրի կիրարկման կամ մեկնաբանման հետ կապված որևէ վեճի շուրջ հետագա գործողություն իրականացնելը՝ սույն ընդհանուր դրույթների հոդված 29-ին համապատասխան:

25.2 Երբ Հանձնաժողովը տեղեկանում է սույն ֆինանսավորման համաձայնագրի կառավարման ընթացակարգերում առկա խնդիրների մասին, նա պետք է բոլոր հնարավոր միջոցներով կապ հաստատի Շահառուի հետ՝ իրավիճակը շտկելու և պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները:

25.3 Խորհրդակցության արդյունքում Ֆինանսավորման համաձայնագիրը կարող է փոփոխվել, կասեցվել կամ դադարեցվել:

25.4 Հանձնաժողովը պետք է պարբերաբար տեղեկացնի Շահառուին Հավելված 1-ում ներառված միջոցառումների իրականացման ընթացքի մասին, որոնք չեն ընդգրկվաշ սույն ընդհանուր դրույթների գլուխ 1-ում:

Հոդված 26. Ֆինանսավորման Համաձայնագրում Կատարվող Փոփոխությունները

26.1 Ֆինանսավորման համաձայնագրի II և III հավելվածներում ցանկացած փոփոխություն պետք է կատարվի գրավոր, ներառյան գրությունների փոխանակումը:

26.2 Եթե փոփոխություն կատարելու մասին դիմումը ներկայացվում է Շահառուի կողմից, վերջինս դիմումը Հանձնաժողով է ներկայացնում փոփոխությունը գործողության մեջ դնելու նախատեսվող ժամկետից առնվազն երեք ամիս առաջ՝ բացառությամբ Շահառուի կողմից պատշաճ կերպով հիմնավորված և Հանձնաժողովի կողմից ընդունված դեպքերի:

26.3 Եթե տեխնիկական ճշգրտումները զգալիորեն չեն ազդում սույն ընդհանուր պայմանների գլուխ 1-ում նշված նպատակների վրա, և եթե դրանք վերաբերվում են մանրամասնություններին, որոնք չեն ազդում ընդունված տեխնիկական որոշումների վրա, և եթե դրանք չեն ենթադրում ԵԶՖ կողմից տրամադրվաղ ֆինանսական միջոցների վերաբաշխում, Շահառուն հնարավորինս շուտ տեղեկացնում է Հանձնաժողովին փոփոխության մասին, ներկայացնում է դրա գրավոր հիմնավորումը և կիրառում այդ փոփոխությունը:

26.4 Չնախատեսված ծախսերի ծածկման համար նախատեսված միջոցներն օգտագործվում են Հանձնաժողովի նախնական գրավոր հաստատմամբ: ԵԶՀ կողմից իրականացվող միջոցառման ֆինանսավորման դեպքում Հանձնաժողովին պետք է տեղեկացնել չնախատեսված ծախսերի մասին:

26.5 Եթե Հանձնաժողովի կարծիքով Շահառուն դադարում է բավարար կերպով իրականացնել սույն ընդհանուր դրույթներում նախատեսված խնդիրները և չհակասելով Ընդհանուր պայմանների 27–րդ և 28–րդ հոդվածներին, Հանձնաժողովը կարող է որոշում կայացնել Շահառուին վերապահված ֆինանսական ապահովման գործառույթները հետ վերցնելու մասին, որպեսզի շարունակի Շահառուի անունից և նրա հաշվին ծրագրի իրականացումը՝ վերջինիս այդ մասին գրավոր տեղեկացնելուց հետո:

Հոդված 27. Ֆինանսավորման Համաձայնագրի Գործողության Կասեցումը

27.1 Ֆինանսավորման համաձայնագրի գործողությունը կարող է կասեցվել հետևյալ դեպքերում՝

- Հանձնաժողովը կարող է կասեցնել Ֆինանսավորման համաձայնագրի կիրարկումը, եթե Շահառուն խախտում է Ֆինանսավորման համաձայնագրով ստանձնած որևէ պարտավորություն.
- Հանձնաժողովը կարող է կասեցնել Ֆինանսավորման համաձայնագրի գործողությունը, երբ Շահառուն խախտում է ցանկացած պարտավորություն, որը սահմանվածված է ընթացակարգերով և ստանդարտ փաստաթղթերով նշված սույն ընդհանուր պայմանների հոդվածներ 1.3 և 5.3-ում.
- Հանձնաժողովը կարող է կասեցնել Ֆինանսավորման համաձայնագրի գործողությունը, եթե Շահառուն խախտում է մարդու իրավունքներին, ժողովրդավարության սկզբունքներին և իրավունքի գերակայությանն առնչվող որևէ պարտավորություն, ինչպես նաև կոռուպցիայի արձանագրված լուրջ դեպքերում.
- Ֆինանսավորման համաձայնագրի գործողությունը կարող է կասեցվել ստորև սահմանված ֆորս մաժորային իրավիճակներում: «Ֆորս մաժոր» նշանակում է կողմերի վերահսկողությունից դուրս գտնվող ցանկացած անկանխատեսելի և բացառիկ իրավիճակ կամ իրադարձություն, որը խոչընդոտում է նրանցից որևէ մեկի կողմից որևէ պարտավորության կատարմանը, ինչը չի կարելի վերագրել նրանց կողմից (կամ նրանց կոնտրագենտների, գործակալների կամ աշխատողների կողմից) թույլ տրվող սխալին կամ անփութությանը և որը, չնայած բոլոր անհրաժեշտ ջանքերին, անհաղթահարելի է: Սարքավորումների կամ նյութի թերությունները կամ դրանց տրամադրման հետ կապված ուշացումները, աշխատանքային վեճերը, գործադուլները կամ ֆինանսական դժվարությունները չեն կարող վկայակոչվել որպես ֆորս մաժորային իրավիճակներ: Պայմանագրի կողմի պարտավորության խախտում չի համարվում, եթե պարտավորությունը հնարավոր չէ կատարել ֆորս մաժորային իրավիճակի հետևանքով, որի մասին մյուս կողմը ստանում է պատշաճ ծանուցում: Ֆորս մաժորային իրավիճակում հայտնված կողմը պետք է մյուս կողմին անհապաղ տեղեկացնի այդ մասին՝ նշելով խնդրի բնույթը, հնարավոր տևողությունը և կանխատեսելի հետևանքները, ինչպես նաև ձեռնարկի հնարավոր վնասի նվազեցմանն ուղղված ցանկացած միջոց:

27.2 Հանձնաժողովը կարող է կասեցնել ֆինանսական համաձայնագիրը առանց նախնական ծանուցման:

27.3 Հանձնաժողովը կարող է ձեռք առնել ցանկացած համապատասխան նախազգուշական միջոց՝ նախքան կասեցման տեղի ունենալը:

27.4 Եթե գործողության կասեցման մասին ծանուցում է տրվում, ապա դրանում նշում է կատարվում գոյություն ունեցող կամ կնքվելիք պայմանագրերի և ծրագրի նախահաշիվների վրա կասեցման հետևանքների մասին:

27.5 Ֆինանսավորման համաձայնագրի գործողության կասեցումը չի սահմանափակում Հանձնաժողովի կողմից վճարումների չեղյալ համարումը սույն ընդհանուր պայմանների հոդվածներ 18 և 28-ին համապատասխան:

Հոդված 28. Ֆինանսավորման Համաձայնագրի Գործողության Դադարեցումը

28.1. Եթե Ֆինանսավորման համաձայնագրի գործողության կասեցմանը հանգեցնող հարցերը չեն լուծվել առավելագույնը 180 օրվա ընթացքում, ցանկացած կողմ կարող է դադարեցնել Ֆինանսավորման համաձայնագրի գործողությունը՝ այդ մասին 30 օրվա ընթացքում ծանուցելով մյուս կողմին:

28.2. Ֆինանսավորման համաձայնագիրը դադարում է գործել, եթե դրա ստորագրելուց հետո երեք տարվա ընթացքում

- որևէ վճարում չի կատարվել,
- համաձայնագիրը կիրարկող որևէ պայմանագիր չի ստորագրվել,
- և եթե այդ միջոցառումը ֆինանսավորվում է ԵԶՀ շրջանակներում՝ ծրագրի նախահաշիվ չի ստորագրվել: :

28.3 Եթե դադարեցման մասին ծանուցում է ներկայացվում, ապա դրանում նշում է կատարվում գոյություն ունեցող կամ կնքվելիք պայմանագրերի և ծրագրի նախահաշիվների վրա դադարեցման հետևանքների մասին:

Հոդված 25. Վեճերի Կարգավորման Վերաբերյալ Պայմանները

29.1 Ֆինանսավորման համաձայնագրից բխող ցանկացած վեճ, որը վեցամսյա ժամկետում չի հաջողվում լուծել կողմերի միջև սույն Ընդհանուր պայմանների 25–րդ հոդվածով նախատեսված խորհրդակցությունների միջոցով, կարող է կողմերից մեկի դիմումով լուծվել արբիտրաժի միջոցով:

29.2 Այդ դեպքում կողմերից յուրաքանչյուրը, վեճն արբիտրաժի միջոցով լուծելու վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում, նշանակում է արբիտր: Հակառակ դեպքում կողմերից ցանկացածը կարող է դիմել Մշտական արբիտրաժային դատարանի (Հաագա) գլխավոր քարտուղարին՝ երկրորդ արբիտր նշանակելու խնդրանքով: Երկու արբիտրները, իրենց հերթին, 30 օրվա ընթացքում պետք է նշանակեն երրորդ արբիտր: Հակառակ դեպքում ցանկացած կողմ կարող է դիմել Մշտական արբիտրաժային դատարանի գլխավոր քարտուղարին՝ երրորդ արբիտր նշանակելու խնդրանքով:

29.3 Եթե արբիտրներն այլ որոշում չեն կայացնում, կիրառվում է Մշտական արբիտրաժային դատարանի՝ Միջազգային կազմակերպությունների և պետությունների մասնակցությամբ արբիտրաժի կամընտիր կանոններով

սահմանված ընթացակարգը: Արբիտրները որոշումներն ընդունում են ձայների մեծամասնությամբ՝ երեք ամսվա ընթացքում:

29.4 Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է ձեռնարկել արբիտրների որոշումը կիրառելու համար անհրաժեշտ միջոցներ: